


Ա. ԱԼԻԽԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿԱՆ
ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ
(ԵՐԵՎԱՆԻ ՖԻԶԻԿԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ)

ՏԱՐԵՎԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ



***Change the world with
Science***

***Փոխենք աշխարհը
գիտությունով***

2023 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	3
ԱԱԳԼ բաժանմունքների գիտական գործունեության հաշվետվություն	
Ս. Մատինյանի անվան տեսական ֆիզիկայի կենտրոն	8
Հ. Վարդապետյանի անվան փորձարարական ֆիզիկայի բաժանմունք..	19
Կիրառական ֆիզիկայի հետազոտությունների բաժին.....	33
Կոսմոլոգիայի և աստղաֆիզիկայի կենտրոն.....	43
Տիեզերական ճառագայթների ֆիզիկայի բաժին	45
Իզոտոպների հետազոտման և արտադրության բաժին	48
Հաշվողական ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաներ բաժին.....	55
Զվանտային տեխնոլոգիաների բաժանմունք	58
Կադրային տվյալներ.....	59
Տեղական և միջազգային համագործակցություն.....	63
Գործուղումներ.....	69
Նոր և ընթացիկ դրամաշնորհային ծրագրեր.....	83
Մասնակցություն գիտաժողովներին, աշխատաժողովներին և սեմինարներին.....	89
Կազմակերպված միջոցառումներ.....	95
Կրթական համակարգն ԱԱԳԼ-ում.....	99
Հասարակայնության հետ կապեր և լրատվություն.....	102
ԱԱԳԼ ենթակառուցվածքի զարգացում, վերազինում և արդիականացում.....	104
Գիտական հոդվածների ցանկ.....	105

Ներածություն

2023 թվականը հորեյանական Էր «Ա. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամի (այսուհետ՝ ԱԱԳԼ) համար: 80 տարի առաջ, Արտեմ և Աբրահամ Ալիխանյանների ջանքերով հիմնադրվեց Երևանի ֆիզիկայի ինստիտուտը, որը հետագայում վերանվանվեց հիմնադիր տնօրենի՝ Արտեմ Ալիխանյանի անունով: Այս առիթով, հաշվետու տարում, թողարկվել է հորեյանական հուշամեդալ, որով պարգևատրվել են ԱԱԳԼ մի շարք վաստակաշատ գիտաշխատողներ, ինչպես նաև՝ գործընկեր գիտական կազմակերպություններ:


Հաշվետու տարում իրականացվել են հետազոտություններ փորձարարական և տեսական ֆիզիկայի, կիրառական, միջուկային ֆիզիկայի, տիեզերական ճառագայթների, աստղաֆիզիկայի և կոսմոլոգիայի բնագավառներում հետևյալ հիմնական ուղղություններով.

- Բարձր էներգիաների մասնիկների ֆիզիկա և ֆենոմենոլոգիա՝
 - ✓ Տարրական մասնիկների և միջուկային ֆիզիկայի տեսություն,
 - ✓ Զվանտային քրոմոդինամիկա,
 - ✓ Նեյտրինային ֆիզիկա,
- Դաշտի քվանտային տեսություն,
- Լարերի տեսություն, վիճակագրական ֆիզիկա և ինտեգրվող մոդելներ,
- Զվանտային տեխնոլոգիաներ, քվանտային ֆիզիկա, կոնդեսացված միջավայրերի և ճառագայթման ֆիզիկա,
- LHC-75 էլեկտրոնային գծային արագացուցչի արդիականացում,
- Պրոտոնային C18/18 ցիկլոտրոնի հագեցվածության բարձրացում,
- Հետազոտություններ CERN միջազգային կենտրոնում (LHC),
- Հետազոտություններ Jefferson Lab-ի A, B, C և D փորձարարական սրահներում,
- Չերենկովյան դիտակների օգնությամբ աստղաֆիզիկական աղբյուրների ուսումնասիրում (HESS և CTA),
- Մասնակցություն EIC համագործակցության աշխատանքներին,
- Ռեալ և վիրտուալ ֆոտոններով միջուկների ճեղքման և ֆրագմենտացիայի ուսումնասիրություններ,
- Հետազոտություններ նյութագիտության ոլորտում՝
 - ✓ 18 ՄԷՎ էներգիայով պրոտոնային և 3.5 ՄԷՎ էներգիայով էլեկտրոնային փնջերով հարուցված երևույթների ուսումնասիրությունը սիլիցիումի բյուրեղներում,
 - ✓ Հիդրոթերմալ միկրոալիքային մեթոդով սինթեզված սիլիկատային նյութերի ֆիզիկաօպտիկական հատկությունների կոմպլեքս ուսումնասիրում,
 - ✓ Պերովսկիտային նյութերի սինթեզ և օպտիկական հատկությունների ուսումնասիրում,
 - ✓ Գրաֆենային հիմքով պերովսկիտային արևային բջիջների ստացում և ուսումնասիրում,
- Փնջի պրոֆիլի չափման նպատակով պայմանավորված, նախագծվել և արտադրվել են նոր տեսակի լարային մոնիտորներ,
- Իրականացվել են ռադիոկենսաբանական հետազոտություններ ԱՐԵԱԼ արագացուցչի էլեկտրոնային փնջի վրա,
- Գեոդեզիական հոսքերի հիպերբոլականություն,

- Հարլի լարվածություն, դիտողական այլ անումալիաներ, մոդիֆիկացված գրավիտացիա,
- Գալակտիկական մուբ հալոները ըստ Պլանկ արբանյակի միկրոալիքային տվյալների,
- Արհեստական բանականություն, մեքենայական ուսուցման մեթոդներ աստղաֆիզիկական տվյալների վերլուծությունում,
- Գերնոր աստղեր և գալակտիկաների մորֆոլոգիա, դինամիկա,
- Մթնոլորտում բարձր էներգիայի ֆիզիկայի համար (HEAP),
- Բժշկական իզոտոպների արտադրության տեխնոլոգիաների և սարքավորումների մշակում, արտադրություն,
- Հաշվողական համակարգերի վերագինում, ծրագրային փաթեթների սպասարկում, թարմացում և նոր հաշվողական ծրագրերի տեղադրում,
- Խոշոր միջազգային համագործակցություններում (Belle II, մասնակիորեն Hermes) ստացված մեծաքանակ տվյալների մշակում, ֆիզիկական արդյունքների ստացում:

ԱՎԳԼ-ի աշխատակիցների թիվը 2023թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ 329 է, այդ թվում՝ գիտական անձնակազմ՝ 129, ճարտարագիտատեխնիկական անձնակազմ՝ 72, վարչասպասարկող անձնակազմ՝ 128: Գիտական աստիճան ունեցող աշխատակիցների թիվը 102 է, այդ թվում՝ 23 գիտությունների դոկտոր և 79 գիտությունների թեկնածու: Պրոֆեսորի կոչում ունի 8 աշխատակից:

Հաշվետու ժամանակահատվածում ԱՎԳԼ-ն գրանցել է շոշափելի արդյունքներ գիտական համագործակցությունների, ինչպես նաև ենթակառուցվածքների զարգացման ուղղություններով: Այս մասին են վկայում գիտաշխատողների կողմից միջազգային բարձր ազդեցության գործակից ունեցող գիտական ամսագրերում 220 հոդվածի տպագրությունը, միջազգային գիտաժողովների մասնակցությունը, կազմակերպված գիտական միջոցառումները, գիտական մասշտաբային և լոկալ սեմինարները և այլն:



Նկ. 1

Տարի	2020 թ.		2021 թ.		2022 թ.		2023 թ.	
	Հրատ. տ.	Հղում.	Հրատ.	Հղում.	Հրատ.	Հղում.	Հրատ.	Հղում.
Հայաստան	1142	26078	959	25743	982	26300	1020	26800
ԱԱԳԼ	304	17648	251	17251	192	17400	220	17600
%	28	68	26	67	20	66	22	66

Աղյուսակ 1

Հարկ է նշել, որ գիտական գործունեության առաջխաղացմանը մեծապես նպաստում են միջազգային և տեղական համագործակցությունները: ԱԱԳԼ-ն ընդհանուր առմամբ ունի 70-ից ավել համագործակցություն, որոնց թվում են միջազգային խոշորագույն գիտափորձեր՝ *CERN, JLAB, DESY, KEK (Belle 2), HESS, MAGIC, NICA, EIC* և դրանց բաղադրիչ մաս կազմող համագործակցություններ:

2023 թ. ԱԱԳԼ աշխատակիցները մեկնել են ավելի քան 80 աշխատանքային գործուղումների: Դրանց նպատակն է եղել ընթացիկ համագործակցությունների շրջանակներում համատեղ աշխատանքների իրականացումն ու գիտափորձերի մասնակցությունը, ուսանողների և երիտասարդ մասնագետների վերապատրաստումը, ստաժավորումը և այլն: Գործուղման հիմնական երկրներն են՝ Շվեյցարիա, Ֆրանսիա, Իտալիա, Իսրայել, Գերմանիա, Իսպանիա, Հունաստան, ԱՄՆ, ՌԴ և այլն:

ԱԱԳԼ գիտական գործունեության բարձր մակարդակի և գիտաշխատողների արդյունավետ աշխատանքների շնորհիվ շարունակվել է ակտիվ մասնակցությունը տեղական և միջազգային դրամաշնորհային ծրագրերին:

Մասնավորապես, հաշվետու տարում, ԱԱԳԼ գիտնականները և հետազոտական խմբերը, ՀՀ ԿԳՄՍՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից հայտարարված դրամաշնորհային ծրագրերին մասնակցել և հաղթող են ճանաչվել հետևյալ մրցույթներում.

- «ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ գիտական կազմակերպությունների աշխատակիցների մասնագիտական վերապատրաստման մրցույթ 2023»
- «ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ գիտական կադրերի (PhD, PostDoc) վերապատրաստման մրցույթ 2023/2»
- «ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ «Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր - 2023» մրցույթ
- «Գիտական խմբերի կամ լաբորատորիաների (բաժինների) ամրապնդման աջակցություն - 2023» մրցույթ
- Երկակի նշանակության ծրագրերի աջակցության գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթ 2023/2
- «Հեռավար լաբորատորիաների հիմնադրում 2024» մրցույթ
- Գիտական ստորաբաժանումների նյութատեխնիկական բազայի արդիականացման համար մրցույթ

Հաջողություններ են գրանցվել նաև տեղական ոչ պետական և միջազգային դրամաշնորհների տրամադրման մրցույթներում:

Երիտասարդների թվի կտրուկ ավելացումն ԱԱԳԼ ռազմավարության կարևորագույն նպատակներից է: Հաշվետու ժամանակահատվածում տեղի են ունեցել թեկնածուական ատենախոսության 4 և մագիստրոսական թեզերի 3 պաշտպանություններ: ԱԱԳԼ ասպիրանտուրա դիմել և ընդունվել են 2 ասպիրանտներ:

Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել են ճանաչողական շրջայցեր դպրոցականների և ուսանողների համար: Բացի մագիստրատուրայի ընթացիկ ներքին և արտագնա դասախոսություններից կազմակերպվել են նաև լրացուցիչ դասախոսություններ, հանրային միջոցառումներ, ինչը կրելու է շարունակական բնույթ:

Ռազմավարական նշանակություն ունի նաև գիտական և տեխնոլոգիական ենթակառուցվածքների արդիականացումը և զարգացումը: ԱԱԳԼ-ն այս ուղղությամբ ևս խոստումնալից առաջընթաց է գրանցել: Հաշվետու ժամանակահատվածում ձեռք են բերվել գիտական սարքեր ու սարքավորումներ, գրասենյակային կահույք և այլն:

Ենթակառուցվածքների արդիականացման և տեխնոլոգիական վերազինման ամենաակնառու ձեռքբերումները հանդիսանում է երկու խոշոր լաբորատորիաների գիտական սարքավորումների համալրումը (1000-դասի մաքուր սենյակ ու Առաջնակարգ դետեկտորներով լաբորատորիա):

2023 թ. ԱԱԳԼ-ն ունեցել է հետևյալ դրամական ներհույքերը.

Միջազգային դրամաշնորհ	67,800,927
Արտաբյուջետային ներհույքեր	230,826,912
ՀՀ ԿԳՄՍՆ	7,844,000
Բազային ֆինանսավորում	870,077,800
ՀՀ գիտութ. ազգային ակադեմիա ՊՈԱԿ	2,650,000
ՀՀ ԿԳՄՍՆ ԲԿԳԿ	648,516,500
Ընդհանուր	1,827,716,139

Աղյուսակ 2


Բազային ֆինանսավորման մասնաբաժինը 2023թ.-ի ընդհանուր մուտքերի մեջ	48 %
Բազային ֆինանսավորման մասնաբաժինը 2023թ.-ի մուտքերի մեջ՝ առանց ԲԿԳԿ դրամաշնորհների	74 %

Աղյուսակ 3

ԱԱԳԼ-ն որդեգրել է գիտության հանրայնացման խթանման քաղաքականություն և իր գիտական գործունեության տպավորիչ արդյունքների շնորհիվ հաշվետու տարվա ընթացքում մշտապես եղել է մամուլի ուշադրության կենտրոնում.

- ✓ Ասուլիսների հրավեր և մասնակցություն,
- ✓ Հարցազրույցների հրավեր և մասնակցություն,
- ✓ Մամուլը մեր մասին,
- ✓ Նկարահանված հոլովակներ ինստիտուտի գիտական ձեռքբերումների մասին,
- ✓ Կազմակերպված սեմինարների լուսաբանում և այլն:

ԱԱԳԼ գիտական բաժանմունքների մանրամասն հաշվետվությունները, ինչպես նաև ներածական բաժնում տրված քանակական ցուցանիշների մեկնաբանությունները ներկայացված են ստորև:



Ս. Մատինյանի անվան տեսական ֆիզիկայի կենտրոն

Ղեկավար՝ Ռ.Պ. Մանվելյան

Հաշվետու ժամանակահատվածում **Ս. Մատինյանի անվան տեսական ֆիզիկայի կենտրոնի (Տեսական Բաժանմունք)** հետազոտությունների իրականացման

հիմնական ուղղություններն են եղել՝

- Բարձր էներգիաների ֆենոմենոլոգիա (Տարրական մասնիկների և միջուկային ֆիզիկայի տեսություն, Զվանտային Զրոմոդիսամիկա, Նեյտրինային ֆիզիկա),
- Դաշտի քվանտային տեսություն, լարերի տեսություն, վիճակագրական ֆիզիկա և ինտեգրվող մոդելներ,
- Զվանտային ֆիզիկա,
- Կոնդենսացված միջավայրերի և ճառագայթման ֆիզիկա, Այդ ուղղություններով 2023 թ. կատարվել են արդյունավետ հետազոտություններ և ստացվել են հետևյալ հիմնական արդյունքները՝

I. Բարձր էներգիաների ֆենոմենոլոգիա [1]-[7]

[1]-[2] ում ֆմ.գ.դ, պրոֆեսոր Հ. Ասատրյանի խմբի հիմնական նպատակն է հաշվարկել ԶԶԴ ուղղումները $B \rightarrow X_s$ gamma և $B \rightarrow X_s$ gamma gamma տրոհումների, ինչպես նաև $B \rightarrow \text{Bar}(B)$ սիստեմի խառնման պարամետրերի համար: Մենք ստանում ենք բարելավված կանխատեսումներ ֆիզիկական մեծությունների համար փորձարարական տվյալների հետ համեմատելու համար: Արդյունքները կարող են օգտագործվել նոր ֆիզիկայի վրա սահմանափակումներ ստանալու համար: Հետևյալ արդյունքները ստացվել են լայն միջազգային համագործակցության շնորհիվ, մասնավորապես, պրոֆ. Գրոյբի, ինչպես նաև պրոֆ Նիերստեի հետ:

ա) $b \rightarrow s$ gamma, α_s^2 կարգի ուղղումները c քվարկի ֆիզիկական (ոչ գրո) գանգվածի համար:

Հայտնի է, որ մեր $B \rightarrow X_s$ gamma տրոհմանը նվիրված նախորդ աշխատանքներում ներդրման մի մասը ստացվել է մեծ m_c -ի համար ասիմպտոտիկ արտահայտության և արդյունքների ինտերպոլյացիայի միջոցով: Պարզ է, որ եթե մենք ունենանք արդյունքներ m_c -ի ֆիզիկական արժեքի համար, դա թույլ կտա էականորեն լավացնել կանխատեսման ճշտությունը:

Մենք վերջացրել ենք $B \rightarrow X_s$ gamma տրոհման հետ կապված ԶԶԴ α_s^2 ուղղումների այն դիագրամների հաշվարկները, որտեղ գլյուոնները չեն դուրս գալիս b-քվարկի գծից: Արդյունքները տպագրված են JHEP ամսագրում:

բ) $b \rightarrow s$ gamma gamma , α_s կարգի ուղղումները կարգի ուղղումները O2-O7 օպերատորների ինտերֆերենցիայի համար:

Մենք շարունակում ենք $B \rightarrow X_s$ gamma gamma տրոհման O2-O7 օպերատորների ինտերֆերենցիայի հետ կապված ԶԶԴ α_s կարգի ուղղումների հետ հաշվարկները: Ստացվող ինտեգրալների բերելը վարպետ ինտեգրալների բավականին բարդ խնդիր է: Այդ հաշվարկը մի շարք դիագրամների համար ավարտված է, և մենք անցել ենք բուն վարպետ ինտեգրալների հաշվարկին $m_c/m_b = 0.27, 0.29, 0.31$; $m_s = 400\text{MeV}, 500\text{MeV}, 600\text{MeV}$

և $s_1=1/5$, s_2 -ի որոշակի միջակայքում գտնվող արժեքների համար և $s_2=1/5$, s_1 -ի որոշակի միջակայքում գտնվող արժեքների համար: ($p_b=p_s+q_1+q_2$; $s_1=(p_b-q_1)^2$; $s_2=(p_b-q_2)^2$; այստեղ p_b b -քվարկի իմպուլսն է, p_s s -քվարկի իմպուլսը, և q_1 , q_2 ֆոտոնների իմպուլսները): Մի շարք դիագրամների համար հաշվարկը վերջացել է, մյուսների համար շարունակվում է: Հաշվարկների համար օգտագործվում են SecDec և FIESTA5 ծրագրերը:

գ) $b \rightarrow s$ gamma gamma, alphas կարգի ուղղումները ուղղումները: O7-O8:

Հաշվարկվել է O7-O8 օպերատորների ինտերֆերենցիայի alphas կարգի ներդրումը $b \rightarrow s$ gamma gamma տրոհման լայնության մեջ: Մենք դիտարկում ենք նաև կախվածությունը s -քվարկի զանգվածից ստացված արդյունքները՝ փոխելով m_s -ը

հետևյալ միջակայքում. $m_s=400\text{MeV}$, 500MeV , 600MeV :

O7-O8 օպերատորների ինտերֆերենցիայի ներդրումը $b \rightarrow s$ gamma gamma տրոհման լայնության մեջ հավասար է 2-3%-ի: Աշխատանքը հրապարակված է:

դ) Ֆերմիոնային ներդրումը $B_s\text{-}\bar{B}_s(B_s)$ համակարգի տրոհումների լայնության տարբերության համար:

Այստեղ մենք հաշվարկում ենք $\alpha_s^2 \cdot N_f$ կարգի ներդրումը $B_s\text{-}\bar{B}_s(B_s)$ համակարգում տրոհումների լայնության տարբերության մեջ՝ վերցնելով c քվարկի զանգվածը հավասար իր ֆիզիկական արժեքին, ի տարբերություն մեր նախորդ աշխատանքների, որտեղ թույլ գազաթին կցված գծերի համար այն հավասար էր զրոյի: Ֆերմիոնային օղակների հետ ունեցած ներդրումները ֆունկցիաներ են $z=mc^2/m_b^2$: Բոլոր վարպետ ինտեգրալները (MI), որոնք ստացվում են ներքևում ցուցադրված Ֆեյնմանի դիագրամներից, ներկայացվում են z -ի շարքի տեսքով անալիտիկ ձևով: Ներկայումս վերջացնում ենք վերանորմավորման հետ կապված անդամների հաշվարկը, հետագայում կանցնենք բուն դիագրամներին: Մեր արդյունքները կապված են այդ դիագրամների կեղծ մասերի հետ: Ստացվելիք արդյունքները թույլ կտան նոր կանխատեսումներ ստանալ $B_s\text{-}\bar{B}_s(B_s)$ համակարգի տրոհումների լայնության տարբերության $\Delta\Gamma$ համար:

[3]-[7]. ում Ա. Կոցինյանը 2023 թ. հիմնականում զբաղված էր CERN-ում COMPASS փորձի տվյալների վերլուծությամբ: Նաև մասնակցել է վերլուծության արդյունքների հիման վրա հողվածներ գրելուն: Ա. Կոցինյանը մասնակցել է հադրոնային կառուցվածքի և սպեկտրոսկոպիայի միջազգային խորհրդատվական կոմիտեի աշխատանքներին 2023 թ. հունիսի 25-28-ը Պրահայում հունիսի 26-ից 28-ը, <https://indico.cern.ch/event/1250132/page/2875> - հանձնաժողովներ:

Տեսական Բաժանմունքի առ. գ.ա. Ա. Իոաննիսյանը կատարել է աշխատանքներ և որպես տեսաբան ունեցել է ներդրում նեյտրինային ֆիզիկայի հետ կապված էքսպերիմենտալ համագործակցությունում (JUNO, DUNE):

Տեսական Բաժանմունքի առ. գ.ա. Ն. Իվանովը պաշտոնապես հանդիսանում է ԱՊԳԼ-ԵրՖԻ-ի ներկայուցիչը միջազգային SPD NICA ծրագրում: Ակտիվ մասնակցել է CDR SPD NICA ստեղծման պրոցեսում: Պատրաստել է Ստադրությունների Համաձայնագիր (Memorandum of Understanding) ԵրՖԻ-ի և JINR-ի միջև, ըստ որի մեր փորձարարները կմասնակցեն էլեկտրամագնիսական կալորիմետրի ստեղծման և տեղադրման պրոցեսներում SPD NICA գիտափորձի համար:

II. Դաշտի քվանտային տեսություն, լարերի տեսություն, մաթեմատիկական ֆիզիկա և ինտեգրվող մոդելներ [8]-[24]

[8].ից- [11]. ում ուսումնասիրվել է հետևյալ հարցերը և ստացվել են համապատասխան արդյունքներ՝

ա) Դուրս է բերվել կցված ներկայացման չորրորդ աստիճանի ունիվերսալ վերլուծությունը ըստ Կազիմիրի ենթատարածքների: Գտնված են նաև Կազիմիրի ունիվերսալ արժեքները:

բ) Չտված Չերն-Սայմոնսի տեսություն:

Չտված Չերն-Սայմոնս տեսության վիճակագրական գումարները, բացառիկ տրամաչափային խմբերով, ներկայացրել ենք ընդհանրացված սինուս ֆունկցիաների տեսքով: Ստացված վիճակագրական գումարի համար հաշվարկվել է Գոպակումար-Վաֆա մոտավորությունը: Այն ունի որոշ տոպոլոգիական լարի վիճակագրական գումարի տեսք, որի համապատասխան Կալաբի-Յաուի բազմությունը մնում է անհայտ:

գ) Օգտագործելով պարզ Lh B, C, F, G տեսակների հանրահաշիվների Մակդոնալդի դեֆորմացիան, կառուցվել է գտված Չերն-Սայմոնսի տեսություն երկու գտման պարամետրերով: Դա հնարավոր դառավ Կաց-Պետերսոնի բանաձևի ընդհանրացման հիման վրա: Հաշվարկվել է համապատասխան վիճակագրական գումարի ինտեգրալ ներկայացումը, որը բերված է ունիվերսալ տիպի բանաձևերի տեսքին: Դա հնարավոր է դարձնում հաշվարկել համապատասխան Գոպակումար-Վաֆա մոտավորությունը, և գտնել համապատասխան դուալ լարերի տեսություն, ինչը, սակայն, պահանջում է երկար հաշվարկ:

դ) Բոլոր դասական պարզ տրամաչափական խմբերի համար գտված Չերն-Սայմոնս տեսության վիճակագրական գումարները ներկայացրել ենք ընդհանրացված սինուս ֆունկցիաների տեսքով: B,C տիպի հանրահաշիվների համար այս ներկայացումը նոր է: Ուսումնասիրել ենք ստացված արտահայտությունների ու հնարավոր գտված տոպոլոգիական լարերի վիճակագրական գումարների միջև հարաբերակցությունները: Մասնավորապես, գտված տեսության համար վերջնական արտահայտության մեջ առաջանում է մի արտադրիչ, որը, ենթադրաբար, համապատասխանում է ոչ օրիենտացվող մակերևույթներին: Բացի դրանից, ներմուծել ենք նոր ներկայացում՝ տոպոլոգիական լարերի վիճակագրական գումարի հաստատուն արտապատկերում բաղադրյալի համար:

[12].-[13]. ում Կատարվել են ծավալուն հետազոտություններ Կոր տարածություններում Քվանտային դաշտերի տեսությունների, AdSd+1/CFTd համապատասխանության և փոխազդող Բարձր Սպինների (FU) Տեսությունների ոլորտներում:

ա) Մենք վերանայել ենք կամայական չափերում կամայական ամբողջ թվի սպինի հոսանքների կոնֆորմ եռակետանի կոռեյացիոն ֆունկցիաների դասակարգման և հստակ կառուցման խնդիրը: Պահպանվող հոսանքների համար մենք սահմանում ենք պահպանման պայմանի հավասարումը և ուղղակիորեն կառուցում ենք լուծումները բարձր սպիններով դեպքի համար, օգտագործելով նախօրոք հայտնի ցածր սպիններով դեպքերի պատասխանները: Այդ ճանապարհով հնարավոր է ստանալ ընդհանուր պատասխանը պահպանվող եռակետանի կոռեյացիոն ֆունկցիաների համար: Հետազոտությունները ձևակերպվել են որպես ծավալուն հոդված և ուղարկվել են տպագրության:

բ) Օգտագործելով Բարձր Սպիններով հոսանքների կոնֆորմ եռակետանի կոռեյացիոն ֆունկցիաների կառուցվածքի գիտելիքները ստացված նախորդ

խնդիրը լուծելուց, մենք պլանավորում ենք ավելի լավ հասկանալ Կոնֆորմ ԲՍ տեսությունները գրավիտացիոն ֆոնում: Մասնավորապես պետք է ուսումնասիրել Կոնֆորմ հոսանքի հետքի անոմալիան ԲՍ տրամաչափային դաշտերի ֆոնում: Այդ անոմալիաները հանրահայտ Կոնֆորմ կամ Վեյլի անոմալիայի ԲՍ ընդհանրացումն են արտաքին գրավիտացիոն դաշտում և դեռ չեն ուսումնասիրված ոչ թենզորային կառուցվածքի և ոչ էլ սինգուլյարության իմաստով:

գ) Վերոհիշյալ խնդիրը քննարկվել է մեր թեմայի արտասահմանյան խորհրդատու պրոֆեսոր Ստեֆան Թայսենի հետ՝ Մաքս Պլանկի անվան Գրավիտացիոն ֆիզիկայի ինստիտուտից: Քննարկումը կայացել է Ռուբեն Մանվելյանի մեկ ամսյա այցի շրջանակներում: Հոդվածը գտնվում է մշակման փուլում, իսկ հրատարակումը սպասվում է Ռ. Մանվելյանի Մաքս Պլանկ ինստիտուտ հաջորդ այցից հետո մյուս տարվա ընթացքում :

դ) Wolfram Mathematica-ի միջոցով մոդելավորվել են բոլոր այն մոնոմները որոնք բավարարում են եռանկյան անհավասարումներին: Ներմուծվել են բոլոր հավասարումները որոնց լուծումները մեզ հետաքրքրում են: Նպատակ է դրվել Wolfram Mathematica-ի միջոցով ստանալ բոլոր հնարավոր հավասարումները և դրանց միջից առանձնացնել գծորեն անկախ լուծումները: Վերջինս անելու համար, մոդելավորվել է ծրագիր, որը դուրս է բերում հավասարումները և նրանց ներկայացնում մատրիցական տեսքով, այնուհետև հաշվելով հավասարումների համակարգի ռանգը, հնարավոր է լինում գտնել անկախ լուծումների քանակը: Վերջինիս օգնությամբ հնարավոր է դարձել կամայական սպինի համար դուրս բերել ունիվերսալ բանաձև, որը տալիս է անկախ լուծումների քանակը:

[14].-[17]-ում

ա) կիրառելով կոնֆորմ դաշտի տեսության և լոկալիզացիայի մեթոդներ, ուսումնասիրել ենք Շրյոդինգերի տիպի Ֆուլքայան սինգուլյարություններով օժտված դիֆերենցիալ հավասարումներով նկարագրվող գրավիտացիոն միջավայրում սկալյար ալիքների տարածումը: Կոնֆորմ դաշտի տեսության ոլորման (braiding) և միաձուլման (fusion) կանոնների կիրառմամբ ճշգրիտ բանաձևեր են ստացվել ալիքային ֆունկցիայի՝ տարբեր սինգուլյարություններում վարքը միմյանց հետ կապող մատրիցների համար: Այս արդյունքները կիրառված են սև խոռոչների և Էկզոտիկ կոմպակտ օբյեկտների քվադր-նորմալ մոդերի (QNM), կլանման լայնական կտրվածքների, ուժեղացման գործոնների և ճկման նկատմամբ արձագանքների ուսումնասիրման համատեքստում: Մասնավորապես ներմուծված է Լովի դինամիկ թվի հասկացությունը գրավիտացիայում:

բ) Արջիրես-Դուգլասի տիպի կոնֆորմալ տեսությունները բավականին դժվար է ուսումնասիրել, հաշվի առնելով, որ դրանք մեկուսացված են և ուժեղ կապված, այսպիսով չունենալով լագրանժյան նկարագրություն: Հարթ տարածության մեջ ճշգրիտ նկարագրությունը տրվում է Չայբերգ-Վիտեն տեսությամբ: Ω -ֆունի միացումը երկրաչափությունը դարձնում է «քվանտային»: Այս հոդվածում մենք օգտագործում ենք AGT համապատասխանությունը մոտակա մոնոպոլային կետերի շրջակայքում վիճակագրական գումարի Ω -ճշգրիտ բանաձևերը ստանալու համար, որտեղ դինամիկան նկարագրված է ԿԴՏ-ի անկանոն կոնֆորմ բլոկներով: Արդյունքները ստուգվում են այն արդյունքների համեմատ, որոնք ստացվել են ռեկուրսիոն առնչություններից, որոնք կոնֆորմ անոմալիայի հետևանք են: Ցույց է տրված, որ երկու մոտեցումների արդյունքները համընկնում են: Քննարկվում է նաև Նեկրասով-Շատաշվիլի սահմանը:

Վերջապես, մենք մեկնաբանում ենք սև խոռոչների առկայությունը Դե Սիտթերի տարածությունում, որոնց ցածր էներգիայի դիսամիկան նկարագրված է Արջիրես-Դուգլասի տեսությամբ:

գ) աշխատանքում քառաչափ տարածաժամանակում ուսումնասիրել ենք H_0 տիպի Արջիրես-Դուգլասի տեսությունը Ω -ֆոնում: Այդ նպատակով կառուցել ենք Լիովիլի $5/2$ ռանգի անկանոն վիճակը: Ստացված արդյունքները համեմատել ենք ընդհանրացված հոլոմորֆային անոմալիայի մոտեցման հետ, որն ապահովում է պրեպոտենցիալի վերլուծությունը ըստ Ω -ֆոնի $\epsilon_{1,2}$ պարամետրերի: Կատարել ենք $\epsilon_1 = -\epsilon_2$ մասնավոր դեպքի ուսումնասիրությունը համեմատելով H_0 վիճակագրական գումարը Պենլեվե 1 դիֆերենցիալ հավասարման τ -ֆունկցիայի հետ: Նաև քննարկել ենք Նեկրասով-Շատաշվիլու սահմանը $\epsilon_1 = 0$, որը հասանելի է ինչպես դեֆորմացված Չայբերգ-Վիտենի կորի, այնպես էլ WKB մեթոդների միջոցով:

դ) աշխատանքում դիտարկվել է $A_2^{((p))}$ կոնֆորմ դաշտի տեսություններ: Այստեղ վերանորմավորումների խմբի (ՎԽ) հոսքի նկատմամբ ինվարիանտ որոշակի բազմությունների համար հաշվարկվել է ուլտրամանուշակագույն դաշտերի և ինֆրակարմիր դաշտերի միջև խառնման գործակիցները: Դիտարկված ՎԽ ինվարիանտ բազմությունները պարունակում են վեց հիմնական և չորս երկրորդական դաշտեր: Հաշվարկները կատարվել են՝ օգտվելով ՎԽ դոմենային պատի մոտեցումից:

[18]-[20]-ում

ա) Ուսումնասիրվել է բևեռացված լույսի տարածումը իզոտրոպ բեկման ցուցիչով միջավայրում: Ցույց է տրվել, որ բևեռացումը խախտում է միջավայրի լրացուցիչ համաչափությունները: Այնուհետև մենք առաջարկեցինք բևեռացումից կախված բեկման ցուցիչ կառուցելու սխեմա, որը վերականգնում է սկզբնական պրոֆիլի բոլոր համաչափությունները: Առաջարկվող սխեման պատկերագարված է Լյունեբուրգի և Մաքսվելի ձկան աչքի օրինակների վրա :

բ) Առաջարկվել է Ruijsenaars-Schneider (RS-) մոդելի պարզ ձևակերպում, որը հիմնված է ոլորված Պուլսսոնի փակագծերի վրա, որոնք սովորաբար օգտագործվում են արտաքին մագնիսական դաշտում շարժվող մասնիկները նկարագրելու համար: Այնուհետև, ելնելով այս ձևակերպումից, առաջարկվում է դիսամիկ երկչափ Պուլսսոնի համաչափությունն ունեցող համակարգ, որը նկարագրվում է նույն Համիլտոնյան և ոլորված Պուլսսոնի փակագծերով, որոնք համապատասխանում են գրեթե կամայական մագնիսական դաշտում շարժմանը:

գ) Ուսումնասիրվել է պատահական մակերևութային անհարթությունների ազդեցությունը լույսի կլանման վրա անթափանցիկ միջավայրում թեքությամբ ընկնելու դեպքում: Մենք զարգացրել ենք անալիտիկ մոտեցում կատարելագործված սահմանային պայմաններով որոնք հաշվի են առնում անհարթությունները մետաղական և դիելեկտրիկ թիթեղներում: Մեր մոտեցումը բացահայտել է ինտերֆերենցիոն անդամներ որոնք զգալիորեն փոխում են կլանման կախվածությունը տարբեր բնութագրիչներից: Մենք քննարկել ենք տեսության կիրառելիության սահմանները որ պահպանվում է միկրոալիքային տիրույթից մինչև օպտիկական տիրույթ: Բացահայտվել են անհարթությունների հետ կապված կլանման անկյունային և բևեռացիոն կախվածությունները: Գուշակվել է այնպիսի անկյան գոյություն որի դեպքում կլանումը անհարթ և լրիվ հարթ մակերևույթների դեպքում համընկնում է: Հիմնվելով այս երևույթի վրա առաջարկվել է պատահական անհարթության կորեյացիոն երկարությունը որոշելու մեթոդ:

[21]-[24]-ում

ա) Մենք ուսումնասիրել ենք հիպերբոլիկ հիպերերկրաչափական ֆունկցիայի, որը իրենից ներկայացնում է Լիովիլի դաշտի տեսության միաձուլման մատրիցայի ամենակարևոր մասը, պարաֆերմիոնային ընդհանրացումը: Մենք ցույց ենք տալիս, որ այս պարաֆերմիոնային հիպերերկրաչափական ֆունկցիան կարող է ստացվել նոսրացված Էլիպսային հիպերերկրաչափական $V^{\wedge}(r)$ -ֆունկցիայից: Մենք ստանում ենք այս ընդհանրացված հիպերերկրաչափական ֆունկցիայի սիմետրիայի հատկությունները: Այս ֆունկցիան $r=2$ դեպքում տալիս է սուպերսիմետրիկ հիպերերկրաչափական ֆունկցիան, որը $N=1$ սուպեր Լիովիլի դաշտի տեսության միաձուլման մատրիցայի ամենակարևոր մասն է: Մենք ցույց ենք տալիս, որ այս դեպքի համար սիմետրիայի առնչությունները տալիս են Տեչներ-Վարտանովի բանաձևի սուպերսիմետրիկ ընդհանրացումը:

բ) դիտարկել ենք Էլիպսային հիպերերկրաչափական ինտեգրալների և կոմպլեքս հիպերերկրաչափական ֆունկցիաների հարաբերությունները: Հաշվի առնելով I տիպի Էլիպսային բետա ինտեգրալները, որոնք նկարագրում են որոշակի քառաչափ ոչ աբելյան տրամաչափական տեսությունների սուպերկոնֆորմ ինդեքսներ, մենք դրանք ռեդուկցիա ենք անում մինչև կոմպլեքս հիպերերկրաչափական ֆունկցիաների մակարդակը Մելլին-Բարնսի ներկայացմամբ: Նշվում է նաև կոմպլեքս հիպերերկրաչափական ֆունկցիաների կապը ինտեգրվող բազմամարմին ինդիքսների հետ:

գ) մյուս հոդվածում մենք քննարկում ենք միաձուլման մատրիցայի և Ռակահ-Վիգների $6j$ - սիմվոլների որոշ ասպեկտները $N=1$ սուպերսիմետրիկ Լյուովիլի դաշտի տեսությունում օգտագործելով սուպերսիմետրիկ հիպերերկրաչափական ֆունկցիան: Այս $6j$ - սիմվոլների համար բոլոր հայտնի արտահայտությունները նկարագրված են և ստացված է նորը վերը նշված հիպերերկրաչափական ֆունկցիայի սիմետրիայի ձևափոխություններից:

դ) վերջին աշխատանքում մենք հաշվարկում ենք $N=1$ սուպեր Լյուովիլի դաշտի տեսության Նևո-Շվարց հատվածում մեկ կետանի տորիկ կոնֆորմալ բլոկների մոդուլային ձևափոխության մատրիցը: Այդ նպատակով մենք օգտագործում ենք այս մատրիցայի բացահայտ արտահայտությունը որպես միաձուլման մատրիցայի որոշ տարրերի արտադրյալի ինտեգրալ: Այս ինտեգրալը հաշվարկվում է՝ օգտագործելով ինտեգրալ նույնությունների շղթան սուպերսիմետրիկ հիպերբոլիկ գամմա ֆունկցիաների համար, որոնք ստացվում են պարաֆերմիոնային Էլիպսային գամմա ֆունկցիաների ինտեգրալների ռեդուկցիայից:

III. Զվանտային ֆիզիկա, Վիճակագրային ֆիզիկա Տոպոլոգիական մեկուսիչներ, SPT փուլեր, Զվանտային Հոլի Էֆֆեկտ, եռաչափ ինտեգրելիություն, Ոչ-կրիտիկական լարեր, ուժեղ փոխազդեցություններ,, կիրառական մաթեմատիկա, կենսաֆիզիկա [25]-[67]

[25]-[30]-ում

ա) Մենք կառուցել ենք երեք վիճակաճանց Potts-մոդելի պարամազնիսներ բաց եզրերով եռանկյուն վանդակի վրա պաշտպանված $(\wedge \text{անգամ } Z_3) \wedge 3 \wedge == Z_3 \wedge \text{անգամ } Z_3 \wedge \text{անգամ } Z_3 \$$ և ավելի փոքր $\$Z_3 \$$ համաչափություններով: Մենք ուսումնասիրում ենք բաց եզրերով մանրադիտակային մոդելները և քննարկում համապատասխան դաշտի կոնֆորմալ տեսությունները և դրանց կենտրոնական լիցքերը: Սրանք $\$s=1\$$ պարամազնիսների եզրային վիճակներն են, որոնք պաշտպանված են $\$Z_3\wedge \text{անգամ } Z_3\wedge \text{անգամ } Z_3\$$ և $\$Z_3\$$ համաչափություններով: Սրանք հանդիսանում են ազատ ֆերմիոնների XX մոդելի եզրին վիճակների անալո-

գիան, որը քննարկվել է Լևինի և Գուի կողմից սպին-1/2-ով $\$Z_2$ Իզինգի պարամագնետի համար: Մենք ցույց ենք տալիս, որ սպին- $\$1$ մագնիսներում կան բազմաթիվ տարբերակներ ձեռք բերելու ինքնադուրյալ համիլտոնյաններ և առանց բաց եզրային վիճակներ: Այս մոդելները հիմք են հանդիսանում համաչափությամբ պաշտպանված մի շարք տոպոլոգիական փուլերի (SPT) իրականացման համար՝ պատուհան բացելով ոչ սովորական քվանտային կրիտիկականությունների ուսումնասիրության համար: Ուսումնասիրությունը կապ է հաստատում նաև քննարկվող և Հոլլի էֆֆեկտում սարահարթային անցումները նկարագրող եզրային վիճակների միջև: Աշխատանքը կատարված է ըստ ծրագրի երրորդ բաժնի կետերի: Այս աշխատանքը տպագրության ընթացքում շատ է մեծացել, կատարվել է ահագին նոր աշխատանք և այժմ գտնվում է վերջնական փուլում:

բ) Մենք կառուցել ենք երեք վիճականոց Potts-մոդելի եռանկյուն վանդակի վրա պաշտպանված $\$Z_3$ համաչափություններով պարամագնիսների բաց եզրային վիճակների Համիլտոնյանները: Մենք ուսումնասիրում ենք այդ բաց եզրերով մանրադիտակային մոդելները և քննարկում համապատասխան դաշտի կոնֆորմալ տեսությունները և դրանց կենտրոնական լիցքերը: Սրանք $s=1$ պարամագնիսների եզրային վիճակներն են, որոնք պաշտպանված են $\$Z_3$ համաչափություններով: Գտնված են հետաքրքիր $U(1)$ համաչափություններ, որոնք կանխորոշում են ցածր էներգիաներով վիճակներ:

գ) Ուսումնասիրվել է սիմպլեկտիկ $sp(2N)$ հանրահաշիվը՝ դեֆորմավորված Դանկլի օպերատորների միջոցով, որը նկարագրում է ընդհանրացված N -չափանի Կալոջերո մոդելի դինամիկական համաչափությունը: Այն ներառում է դեֆորմացված ունիտար, ինչպես նաև $sl(2, \mathbb{R})$ կոնֆորմ ենթահանրահաշիվները: Բացահայտված է կապը դեֆորմացված սիմպլեկտիկ գեներատորների միջև: Հիմնվելով կոնֆորմ սպինի և Դանկլի անկյունային մոմենտի Կազիմիրի տարրերի համընկնման վրա, ստանդարտ ու ընդհանրացված Կալոջերոյի մոդելների ալիքային ֆունկցիաները դասակարգվել են ըստ անվերջ չափի ցածրագույն վիճակի կոնֆորմ մուլտիպլետներ: Կալոգերո-Մոզեր մոդելի շարժման բազմանդամային ինտեգրալ առաջացնում է վերջավոր չափի բարձրագույն վիճակի կոնֆորմ մուլտիպլետ, որի անդամները արտահայտվում են դաշտի քվանտային տեսության մեջ հայտնի Վեյլի արտադրյալի միջոցով:

դ) Ընդհանրացված Յանգ-Բաքստերի հավասարումների (\mathcal{CBZ} -եր) համար կառուցվել են լուծումների երկու շարքեր՝ որոշակի կառուցվածքով $N_1^2 \times N_2^2$ մատրիցներով, կամայական N_1 և N_2 չափողականությունների դեպքում: Անհամասեռ \mathcal{CBZ} -երի տարբեր ընդլայնումներ են սահմանվել, քննարկվել է անհամասեռ լուծումների հետ կապված ինտեգրելիության հարցը: Ստացված լուծումների առաջին շարքը (X -ուրվագծով մատրիցների համար) ընդգրկում է մասնավորապես քվանտային ինֆորմացիայի տեսության մեջ հայտնի եռանկյունաչափական մեկ-պարամետրանի լուծումները՝ ոլորքային խմբի համաչափությամբ: Ավելի ընդհանուր լուծումները զույգ չափողականությունների դեպքում արտահայտվում են Յակոբիի էլիպտիկ ֆունկցիաներով: Երկրորդ շարքի կառուցման համար սահմանվում են գրադուացված ու գունավոր տեղափոխությունների մատրիցներ, անորոշ ‘զույգություններով’, որոնք որոշվում են \mathcal{CBZ} -երի լուծման միջոցով: Բերված են մասնավոր օրինակներ զույգ չափանի մատրիցների դեպքում, նաև համապատասխան ինտեգրվող մոդելների Համիլտոնիան օպերատորները: Կենտ դեպքերն ունեն որոշակի յուրահատկություններ, որոնք ընդհանուր (և հիմնական՝ առաջին տիպի շարքերի դեպքում) գծերով ներկայացված են

հողվածում, իսկ ավելի մանրամասն կհետազոտվեն հաջորդ աշխատանքում, որտեղ ինչպես նաև կուսումնասիրվեն գրադուացված մատրիցներով պայմանավորված համաչափությունները: Քվանտային հաշվարկների տեսության մեջ հայտնի Բեյլի 4×4 մատրիցի երկպարամետրանոց ընդհանրացումն է ներկայացվել, որը լուծում է ընդհանրացված ՅԲ հավասարումների համար, ինչպես համասեռ $(2,2,1)$, այնպես էլ անհամասեռ $(2,2,k>1)$ դեպքերում: Քանի որ այս մատրիցը ապահովում է մաքսիմալ խճճվածությամբ վիճակներով Բեյլի բազիսի ստացումը պարզ վիճակներից, լրացուցիչ սպեկտրալ պարամետրի առկայությունը բերում է խճճվածության աստիճանի բնութագրիչներում նոր տարբերակիչ պարամետրի: ԸՅԲՀ-երի կամայական չափողականության ունիտար լուծումները կարող են դիտարկվել որպես բազմամասնիկային քվանտային դարպասներ, ընդ որում մեր ստացած առաջին տեսակի շարքերը բազմապարամետրիկ ընդհանրացում են հանդիսանում եղած լուծումների համար, իսկ երկրորդ տեսակի լուծումները լիովին նոր լուծումներ են ընդհանրացված (համասեռ դեպքում՝ նաև սովորական) ՅԲ հավասարումների համար: Դինամիկ տեսանկյունից, քվանտային ունիտար դարպասները հանդես են գալիս որպես էվոյուցիոն օպերատորներ, ժամանակը որոշվում է սպեկտրալ /կամ օժանդակ/ պարամետրի միջոցով: Բազմապարամետրանոց քվանտային դարպասները ապահովում են ժամանակից բազմաֆունկցիոնալ կախվածության հնարավորություն:

ե) Հողվածի նպատակն է ստեղծել սիմետրիայով պաշտպանված տոպոլոգիական (ՄՊՏ) փուլեր պարունակող բացահայտ տեսքով մոդել՝ հիմնված եռանկունային ցանցի վրա սահմանված Z_2 Իզինգի մոդելի ֆերոմագնետիկ ֆուլի վրա: Արդյունքում ոչ տրիվիալ ՄՊՏ փուլերում առաջանում են անզանգված եզրային վիճակներ: Եզրային համիլտոնյանը պարունակում է 4 կետանի սպինային փոխազդեցություններ մոտակա եզրային կետերի միջև: Ընթացքում զարգացվում է ՄՊՏ մոդելների ստեղծման ընդհանուր տեխնիկա, որը թույլ է տալիս ստանալ տրանսյացիոն ինվարիանտ եզրային մոդելներ:

զ) Աշխատանքի նպատակը կամայական սիմետրիայի վրա հիմնված սիմետրիայով պաշտպանված տոպոլոգիական (ՄՊՏ) փուլեր պարունակող եռանկյուն ցանցի վրա գործող համակարգերը բացահայտ սահմանելու համար ընդհանուր տեխնիկա ստեղծելն է: Արդյունքում ոչ տրիվիալ ՄՊՏ փուլերի համար առաջանում են անզանգված էֆեկտիվ եզրային մոդելներ: Չփոխազդող համակարգերի վրա կիրառելիս ստացվում են եզրի լոկալ երկրաչափությունից անկախ տրանսյացիոն ինվարիանտ մոդելներ:

[31]-ում օգտագործելով Բալոգ-Վայսի կողմից մտցված Բյորկենի ոչ-առաձգական ցրման անալոգ հանդիսացող պրոցեսները $1+1$ չափանի ճշգրիտ լուծվող քվանտային դաշտի տեսություններում, մենք կատարել ենք այդ տեսությունների դասակարգում ելնելով նրանց ճշգրիտ երկու մասնիկանի S-մատրիցայի սիմետրիայից: Եթե S-մատրիցան ունի ոչ-Աբելյան սիմետրիա ապա նրա համապատասխան ստրուկտուր ֆունկցիաներն անկախ լոկալ օպերատորից ունեն ունիվերսալ մեկը բաժանած x անգամ լոգարիթմ քառակուսի x վարք, երբ Բյորկենի x -փոփոխականը շատ փոքր է 1 -ից: Իսկ եթե S-մատրիցան ունի Աբելյան սիմետրիա ապա այդ տեսության ստրուկտուր ֆունկցիաները ունեն աստիճանային վարք փոքր x -ի դեպքում: Արդյունքում օրինակ ունենք $O(N)$ -սիգմա մոդելը, $O(N)$ -Գրոու-Նեվյու մոդելը և $SU(N)$ -Գրոու-Նեվյու մոդելը, որոնք ունեն ասիմպտոտիկ ազատ տեսություններ են $1+1$ չափում այնպես ինչպես QCD-ին $1+3$ չափում, իրենց S-մատրիցաների ոչ Աբելյան

լինելու պատճառով ունեն ստրուկտուր ֆունկցիաներն ունեն միևնույն ունիվերսալ մեկը բաժանած x անգամ լոգարիթմ քառակուսի x վարք փոքր x -երի համար: Իսկ այնպիսի տեսություններ ինչպիսին են sine-Gordon, $Z(N)$ -Իզինգի, $A(n)$ -Թոդայի մոդելները, որոնք ունեն Աբելյան սիմետրիայով երկու մասնիկանի S -մատրիցա, ունեն աստիճանային վարք: Եվ ամենակարևորը, մենք այս ունիվերսալ վարքը, հետևելով Բալոգ-Վայսի հիպոթեզին, միանում եմ հաստատում ենք այն և որ այս վարքը պետք է լինի ունիվերսալ բոլոր ասիմպտոտիկ ազատ տեսությունների համար:

Ի պաշտպանություն այս հիպոթեզի, մենք այս վարքը համեմատել ենք HERA-(1997-2005)-ի կատարված $e\{+\}p$ փորձերի արդյունքների հետ, որտեղ չափվել է համապատասխան ստրուկտուր ֆունկցիան և գտնվել է շատ լավ համընկնում մեկը բաժանած x անգամ լոգարիթմ քառակուսի x վարքի հետ: Ինչը հաստատում է այս վարքի ունիվերսալ լինելը, բոլոր ասիմպտոտիկ ազատ տեսությունների համար:

[32]-[37]-ում

ա) Արտաքին մազնիսական դաշտի ազդեցության տակ, մեկ իոնային անիզոտրոպիայով, վերջավոր շղթայով $1D$ հակաֆերոմագնիսական սպին և Ջյալոշինսկի-Մորիա փոխազդեցությամբ սպին Հայզենբերգի մոդելի համար ստացել ենք խճճվածությունը, մազնիսականությունը և մազնիսական ընկալունակությունը:

բ) Բրասքամպ-Կունցի (Brascamp-Kunz) եզրային պայմաններով $M \times 2N$ քառակուսի վանդակի վրա, Այզինգ մոդելի F ազատ էներգիայի համար, ստացել ենք ճշգրիտ վերջավոր չափի ուղղումներ: $\rho = (M+1)/2N$ կողմի հարաբերակցության տարբեր արժեքների դեպքում հաշվարկել ենք F -ի ρ -րդ գործակիցների $r(\rho)$ հարաբերությունները անսահման երկար գլանի ($M \rightarrow \infty$) և անսահման երկար Բրասքամպ-Կունց շերտի ($N \rightarrow \infty$) համար: Երկչափ դիմերի մոդելի նախորդ ուսումնասիրությունները ցույց են տվել որ $r(\rho)$ -ի $\rho \rightarrow \infty$ սահմանափակող արժեքները ունեն կտրուկ անոմալ վարքագիծ ρ -ի որոշակի արժեքներում: Սակայն երկու մոդելների միջև ρ -ի այս կրիտիկական արժեքները և վերջավոր չափերի ընդլայնման գործակիցների սահմանափակող արժեքները տարբերվում են:

գ) Ուսումնասիրվել են ութմիջուկային նիկել ֆոսֆոնատի վանդակի քվանտային մազնիսական հատկությունները և խճճվածությունը: Մեր տեսական հաշվարկները համեմատվել են մազնիսական զգայունության փորձարարական արդյունքների հետ: Բացի այդ, մենք ուսումնասիրել ենք մազնիսացման հարթակները և մազնիսական զգայունությունը կախված արտաքին մազնիսական դաշտից ցածր ջերմաստիճաններում: Մենք հաշվարկել ենք ջերմային խճճվածությունը (բացասականությունը) և լոգարիթմական բացասականությունը: Մազնիսացման հարթակների թռիչքների և մազնիսական զգայունության գագաթների միջև դիտարկված հարաբերակցությունը արտաքին մազնիսական դաշտի նկատմամբ, ենթադրում է հետագա փորձարարական չափումների անհրաժեշտություն:

դ) Այս աշխատանքում փորձարարական չափումների տվյալները և մազնիսական հատկությունների տեսական ուսումնասիրության արդյունքները՝ մազնիսական զգայունությունը, համընկնում են:

ե) այստեղ մենք դիտարկում ենք հակաֆերոմագնիսական սպին-1 եռամիջուկային և քառամիջուկային նիկելի և կոբալտի իոնների միացությունները: Մասնավորապես դրանց մազնիսացման հարթակները, մազնիսական զգայունությունը, ջերմունակությունը, Շոտկի պիկը, մետաղ

պարունակող միացությունների քվանտային հարաբերակցությունը ցածր ջերմաստիճաններում: Ստացել ենք նաև հակաֆերոմագնիսական սպին 1 և 3/2 կլաստերային մոդելների լոգարիթմական բացասականությունը:

զ) Այս աշխատանքում մենք կիրառել ենք այդ մեթոդը՝ Իզինգի շղթայի փուլային անցման կետերը գտնելու համար՝ մրցակցային փոխազդեցություններով հեռահար ազդեցությունների առկայության դեպքում: Ցույց ենք տվել, որ ներկայացված կանոնիկ և միկրոկանոնիկ համախմբերի միջև փուլային դիագրամում առկա է անհավասարություն:

[38]-[43]-ում

ա) Ստացված արդյունքներից ամենակարևորը դա պարտադրված ուսուցման վիճակագրական ֆիզիկայի կառուցումն է, որ արվել է օգտագործելով մաստեր հավասարումը, հետո մոմենտների փակման հատուկ սխեմա:

բ) Այնուհետև հետազոտել ենք էնտրոպիայի աճն էվոյուցիոն համակարգերում, ցույց տվել որ ստանդարտ վիճակագրական ֆիզիկան չի կարող այնտեղ ուղղակի օգտագործվել:

Լավ առաջընթաց է եղել պատահական մատրիցաների խնդրում կորեյացիայի դեպքում: Ստացել ենք լոկալիզացիք-դելեկալիզացիա փուլային անցման կետերը բավականին ընդհանուր դեպքում:

գ) Դիտարկվել է ստոխաստիկ ռեսեստինգը էվոյուցիոն մոդելներում, այն ունի ոչ-պեռտուրատիվ պահվածք:

դ) Լուծվել է էվոյուցիոն դինամիկան ստոխաստիկ տատանվող լանդշաֆտների վրա, ստացվել են մոտավորություններ դանդաղ և արագ անցումների դեպքում:

ե) Լուծվել է մուտավորի մոդելը միգրացիայի դեպքում:

զ) Ստացվել է ոչ գծային Կալմանի մոդելի լուծումը, բայց առայժմ չի ուղարկվել տպագրության, դիտում ենք հնարավոր կիրառություններ:

[44]-[45]-ում

ա) Աշխատանքում ցույց է տրվել, որ $Ti3C2Tx$ մաքսիմալին տակդիրի դեպքում մակերևույթով ուժեղացված ռամանյան ցրումը պայմանավորված է քվադրոպոլային պլազմոնային ռեզոնանսով: Այդ պատճառով ուժեղացման գործակիցը ընդամենը 105 -107 է, ինչը լավ համընկնում է փորձնական տվյալների հետ:

բ) Աշխատանքում մեկնաբանվել են մաքսիմալների ոչ գծային հատկություններին վերաբերող մի շարք փորձարարական արդյունքներ: Հաշվի առնելով էլեկտրոնների գոտիական կառուցվածքը, ստացվել է կլանման հագեցման ինտենսիվությունը, որը մոտ է չափվածին:


[46]-[49]-ում

ա) Մենք ուսումնասիրել ենք թույլ զոնդի ազդանշանի բևեռացման հարթության պտույտը ուժեղ էլեկտրամագնիսական ալիքների դաշտի՝ և պլազմայի արտաքին մագնիսական դաշտի առկայության դեպքում, հաշվարկված է զոնդի բևեռացման հարթության պտտման անկյունը ինտենսիվ լազերային դաշտում և պլազմայում Գնահատված են մնացորդային գազի խտության տեղային արժեքները ցեզիումի պլազմայում:

բ) Ուսումնասիրված են ռեյատիվիստական ստրոֆոտրոնային ազատ էլեկտրոնային լազերի շարժման հավասարումները անցումային ծերտում: Դիտարկված են ստրոֆոտրոնների երկու տեսակ՝ էլեկտրական և մագնիսական: Ցույց է տրված, որ փոխազդեցության հանկարծակի միացման պայմանը իրատեսական է և իրագործելի:

գ) Այս հոդվածում մենք ուսումնասիրում ենք լույսի կլանումը պտուտակավոր կառուցվածքով ֆոտոնային բյուրեղների (HSPCs) արտաքին ստատիկ մագնիսական դաշտում այն դեպքում, երբ մագնիսա-օպտիկական ակտիվության պարամետրը կախված է լույսի ալիքի երկարությունից: Մանրամասնորեն դիտարկվում են կլանման բոլոր հատկանիշները և բացահայտվում դրանց մեխանիզմները:

դ) Մենք ուսումնասիրել ենք խոլեստերինիկ հեղուկ բյուրեղների շերտի գծային և շրջանաձև դիֆրոիզմի հատկությունները արտաքին ստատիկ մագնիսական դաշտում, որն ուղղված է պարույրի առանցքի երկայնքով: Մենք ցույց տվեցինք, որ երբ լույսի տարածման ուղղությունը և արտաքին մագնիսական դաշտի ուղղությունը համընկնում են, վերջինիս մեծության մեծացումը հանգեցնում է գծային դիֆրոիզմի նվազմանը, մինչդեռ երբ այդ ուղղությունները հակառակ են, արտաքին մագնիսական դաշտի մեծությունը հանգեցնում է աճի գծային դիֆրոիզմի: Արտաքին մագնիսական դաշտի առկայությունը հանգեցնում է շրջանաձև դիֆրոիզմի կորերի տեղաշարժին ինչպես ալիքի երկարության առանցքի, այնպես էլ դիֆրոիզմի առանցքի երկայնքով:



Հ. Վարդապետյանի անվան փորձարարական ֆիզիկայի բաժանմունք

Ղեկավար՝ Հ.Հ. Մարուքյան
 Հաշվետու ժամանակահատվածում **Փորձարարական ֆիզիկայի բաժանմունքն** իրականացրել է հետևյալ աշխատանքները՝

1. Աշխատանքներ՝ կատարված LՈՒԷ-75 էլեկտրոնային գծային արագացուցչի վրա

2023 թ. Ա. Ի. Ալիխանյանի անվան Ազգային Գիտական Լաբորատորիա (ԱԱԳԼ) Փորձարարական ֆիզիկայի Բաժանմունքի (ՓՖԲ) LINAC-75 էլեկտրոնային գծային արագացուցիչում կատարվել են վերանորոգման-վերականգնողական պրոֆիլակտիկ աշխատանքներ ներառյալ՝ ռեգլամենտով պարտադիր նախատեսվածները:

Շնորհիվ կատարված աշխատանքների բարեհաջող իրականացվել են գիտափորձեր LINAC-75-ի փնջերի կիրառմամբ: Փնջերի պարամետրերը՝ Էներգիան և հոսանքը եղել են ըստ փորձերի պայմանների պահանջի՝ Էներգիան - 20-70 ՄԷՎ, հոսանքը - 0,3-1,1 մկԱ, սեանսների տևողությունը՝ 1-3 ժամ:

Փորձերի ժամանակ փնջի պարամետրերի վերահսկումը հաստատեց գծային արագացուցչի հուսալի աշխատանքը: Սեանսները կատարվել են հետևյալ ամիսներին՝

Սպառող, փորձի պատասխանատուները	Էներգիա, ՄԷՎ
Ապրիլ	
ՓՖԲ, 100/7 խումբ՝ Լ. Պողոսյան	70, 21
Միջուկային Հետազոտությունների Միացյալ Ինստիտուտ, Ֆյոբրովի անվան Միջուկային Ռեակցիաների Լաբորատորիա՝ Ս. Վ Միտրոֆանով	40, 50, 60
Օգոստոս	
ՓՖԲ, 100/7 խումբ՝ Լ. Պողոսյան	40
ՓՖԲ, 100/7 խումբ՝ Ն. Մարգարյան	22
Դեկտեմբեր	
ՓՖԲ, 100/7 խումբ՝ Լ. Պողոսյան	29,5
Կիրառական ֆիզիկայի հետազոտությունների բաժին՝ Է. Ալեքսանյան	22

2023 թ. ապրիլին կազմակերպվել էր ՄՀՄԻ-ի գիտաաշխատողների այց ԱԱԳԼ՝ նպատակ ունենալով շարունակել ուսումնասիրել ՄՀՄԻ-ի և Նովի Սադ քաղաքի Համալսարանի պատվիրակության հետ դեռևս 2022 թ. վերջին սկսած համատեղ աշխատանքների հնարավորությունը և իրականացնել LINAC-75-ի 40, 50 և 60 ՄԷՎ Էներգիաներով էլեկտրոնային փնջով համատեղ գիտափորձ:

ՓՖԲ-ի և Իզոտոպների հետազոտման և արտադրության բաժնի HPeG-ի դետեկտորների միջոցով կատարվել է Ճառագայթված թիրախների գամմա-սպեկտրաչափական վերլուծություն:

ՄՀՄԻ-ի և Նովի Սադ Համալսարանի հետ կատարված համատեղ գիտափորձի արդյունքների մի մասը տպագրվել է, իսկ մյուս մասն ընդունվել է տպագրության:

2023 թ. շարունակվել են գիտափորձերը LINAC-75 էլեկտրոնային գծային արագացուցչի արգելակային ֆոտոնային փնջերի օգտագործմամբ՝ կիրառելով ակտիվացիոն անալիզի մեթոդը.

1. Առաջին անգամ ՀՀ-ում իրականացվել է երկրաբանական նմուշներում քիմիական տարրերի պարունակության որոշման գամմա-ակտիվացման վերլուծության (ԳԱՎ) մեթոդի տեստավորումը և ստուգվել դրա գործնական կիրառությունը՝ մի շարք բնապահպանական նշանակություն ունեցող տարածքներից վերցրած երկրաբանական նմուշների քիմիական պարունակության որոշման նպատակով: Տեստավորման համար օգտագործվել է Արագածի հրաբխային շրջանի Արտենի տեղանքից ընտրված օբսիդիանի նմուշը, որը նախկինում հետազոտվել էր նեյտրոնային ակտիվացման վերլուծության (ՆԱՎ) մեթոդով: ԳԱՎ մեթոդի տեստավորման համար օգտագործվել է LINAC -75-ում արագացված $E_e = 20.8$ ՄեՎ էներգիայով էլեկտրոններից առաջացած արգելակային ֆոտոնների փունջը, որով ճառագայթվել է նախապես նախագծված և ստեղծված թիրախային համակարգը: Այն բաղկացած է հաջորդաբար տեղադրված վոլֆրամի ռադիատորից (որում տեղի է ունենում էլեկտրոնների արգելակային ճառագայթումը), այլումինե կլանիչից (որը կլանում է ռադիատորից դուրս եկած էլեկտրոնները) և թիրախների շարանից, որում օբսիդիանի՝ 0.72 գ զանգվածով թիրախից բացի, ընդգրկված են մինչև մի քանի տասնյակ մգ զանգվածով մի շարք ռեպերային թիրախներ (նիկել, ցինկ, նիոբիում, մոլիբդեն, ոսկի, կապար), ինչպես նաև պղնձե մոնիտորային թիրախներ: Ճառագայթված թիրախների գամմա-սպեկտրաչափական վերլուծությունն իրագործվել է գերմաքուր գերմանիումի դետեկտորի հիման վրա գործող գիտասարքի միջոցով, որը տեղադրված է Ավանի աղի հանքում՝ ջրային համարժեքով 650 մետր խորության վրա գտնվող ԱՄԳԼ-ի ստորգետնյա ցածր-ֆոնային լաբորատորիայում: Սպեկտրաչափական տվյալների մշակման և ֆիզիկական վերլուծության արդյունքում չափվել են թիրախներում (γ, n) ֆոտոմիջուկային ռեակցիաների արդյունքում առաջացած ռադիոիզոտոպների ելքերը, որոնց հիման վրա էլ գնահատվել է օբսիդիանի նմուշում առկա քիմիական տարրերի հարաբերական պարունակությունը: Երկու տարբեր մեթոդներով ստացված արդյունքներն ընդհանուր առմամբ համադրելի են: Հիմնականում բացառություն են կազմում օբսիդիանում ցածր պարունակություն ունեցող տարրերը, ներառյալ մկնդեղը, ծարիրը, ինչպես նաև ԳԱՎ մեթոդով չդիտարկված գրեթե բոլոր լանթանիդները (նեոդիմից մինչև լուտեցիում): Հետագա հետազոտություններում թիրախների ճառագայթման և ակտիվության չափումների ռեժիմների համապատասխան ընտրությունը հնարավորություն կընձեռի որոշ չափով ընդլայնելու դիտարկվող տարրերի ցանկը: Կարևոր է ընդգծել, որ ԳԱՎ մեթոդով հաջողվում է դիտարկել մի շարք տարրեր (Ca , Ti , Mn , Sr , Y , Nb , Mo , Pb), որոնք չեն դիտարկվել ՆԱՎ մեթոդով: Այսպիսով, ՆԱՎ և ԳԱՎ մեթոդները կարող են փոխադարձաբար լրացնել միմյանց:
2. ԳԱՎ մեթոդի կիրառության համար անհրաժեշտ են նախօրոք հայտնի տվյալներ հետազոտվող (γ, n) ռեակցիայի σ_w կշռավորված կտրվածքի վերաբերյալ: Քանի որ բավարար ճշգրտությամբ տվյալներ գոյություն ունեն բավականին սահմանափակ քանակով միջուկների համար, ապա տվյալների

այդ բացը լրացնելու համար հետազոտվելիք նմուշի հետ մեկտեղ ճառագայթվում են նաև որոնվող քիմիական տարրերի՝ նախօրոք հայտնի պարունակությամբ ռեպերային թիրախներ: Այդ նպատակով էլեկտրոնների տարբեր էներգիաների դեպքում (նախորդ տարիների $E_e = 21.5$ ՄԷՎ, 28 ՄԷՎ, 35 ՄԷՎ և 55 ՄԷՎ էներգիաները 2023 թ.-ին լրացվել է $E_e = 20,8$ ՄԷՎ էներգիայով) արգելակման ֆոտոններով ճառագայթվել են ՀՀ ԿԳՄՍ նախարարության Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի թեմատիկ ֆինանսավորման ծրագրով նախագծված և ստեղծված թիրախային համակարգեր, որոնք կազմված էին մի շարք քիմիական տարրեր պարունակող թիրախներից, այդ թվում՝ Al, Ti, V, Mn, Fe, Co, Ni, Zn, Y, Nb, Mo, Ag, Cd, Sb, Tb, Tm, Yb, Lu, Hf, Au, Hg, Pb, Th, U: Ճառագայթված թիրախների գամմա-սպեկտրաչափական վերլուծության արդյունքում ստացվել են նոր փորձարարական տվյալներ նշված թիրախների վրա ընթացող ֆոտոմիջուկային ռեակցիաների՝ արգելակման ֆոտոնների սպեկտրով կշռավորված (σ_w) և միջինացված ($\langle\sigma\rangle$) կտրվածքների վերաբերյալ:

2. Աշխատանքներ՝ կատարված C18/18 ցիկլտորնի պրոտոնային փնջի վրա

Հաշվետու տարում կատարվել են գիտափորձեր ցիկլտորն C18/18-ից դուրս բերված պրոտոնային փնջի վրա, կիրառելով ակտիվացիոն մեթոդը.

1. Ուսումնասիրվել են $^{nat}\text{Sn}(p,xn)$ $^{117,118,120,124}\text{Sb}$ ռեակցիաների գրգռման ֆունկցիաները: Ուսումնասիրության շրջանակներում օգտագործվել են GEANT4, SRIM/TRIM ծրագրային փաթեթները, գրգռման ֆունկցիաների տեսական հաշվարկների համար կիրառվել են TALYS 1.96 և EMPIRE 3.2 միջուկային կոդերը: Ստացված արդյունքները համեմատվել են ինչպես գրականությունում առկա այլ աշխատանքների, այնպես էլ TALYS 1.96 և EMPIRE 3.2 կոդերով հաշված տվյալների հետ: Չափման արդյունքները սխալների սահմաններում համընկնում են այլ գիտական կենտրոնների տվյալների և տեսական կանխագուշակումների հետ: Միայն ^{120m}Sb նուկլիդի համար EMPIRE 3.2 կոդերով հաշված տվյալները մոտ 8 անգամ գերազանցում են ինչպես փորձարարական տվյալները, այնպես էլ TALYS 1.96 կոդով հաշվարկի արդյունքները:
2. Ուսումնասիրվել է $^{nat}\text{Gd}(p,x)$ ռեակցիան վերջնարդյունքում առաջացած տերբիումի այնպիսի իզոտոպների համար, որոնք հավանականություն ունեն առաջանալու 1 մկմ հոսանքով մինչև 18 ՄԷՎ էներգիայով պրոտոնային փնջով ճառագայթման դեպքում: TALYS 1.96 և EMPIRE 3.2 ծրագրային փաթեթներով կատարվել են գրգռման ֆունկցիաների հաշվարկ, օգտագործելով բոլոր հնարավոր մոդելները: Տեսական հաշվարկները կատարվել են պրոտոնների լայն էներգետիկ տիրույթում, ռեակցիաների համապատասխան շեմից մինչև 70 ՄԷՎ: Ստացված արդյունքները տպագրվել են: Հաշվարկված տեսական արդյունքների և վերը նշված ռեակցիայի փորձնական չափված արդյունքների միջև նկատելի են տարբերություններ, որոնք կարող են պայմանավորված լինել այն հանգամանքով, որ այդ գիտափորձում որպես թիրախ հեղինակը օգտագործել է գադոլինիումի օքսիդը:
3. Իրականացվել է մի շարք երկրաբանական նմուշների պրոտոնային ակտիվացման վերլուծության (ՊԱՎ) մեթոդի առաջին փորձարկումը ՀՀ-ում: Տարբեր նմուշներում որոշ քիմիական տարրերի բաղադրության որոշման համար առավել օպտիմալ կարող է լինել ՊԱՎ մեթոդը: Դրա ցայտուն օրինակներից է լիթիումը, որի առկայությունը հետազոտվող նմուշում կարող է միարժեքորեն բացահայտվել և քանակապես գնահատվել պրոտոններով

ճառագայթելու շնորհիվ՝ չափելով $7\text{Li}(p,n)7\text{Be}$ լիցքափոխանակման ռեակցիայի արգասիք հանդիսացող 7Be ռադիոիզոտոպի ելքը: ՊԱՎ մեթոդի փորձարկման նպատակով C18/18 ցիկլոտրոնի պրոտոնային փնջով ճառագայթվել են թիրախային համակարգեր, որոնցում ներառվել են մի շարք երկրաբանական նմուշներ (օբսիդիան, գրանիտ, հող՝ այդ թվում՝ Քաջարանի հանքարդյունաբերական պոչամբարից), ինչպես նաև միատարր ռեպերային թիրախներ (այդ թվում՝ Cu, Mo, Cd, W, Au, Pb, Th, U): Ընթացքի մեջ է ՊԱՎ մեթոդի փորձարկման վերաբերյալ գիտական հոդվածի նախապատրաստումը:

4. Հաշվարկվել և ստեղծվել են ուրանի, թորիումի, պլատինի և վոլֆրամի թիրախային համակարգեր, SRIM&TRIM ծրագրերով հաշվարկվել է պրոտոնային փնջի E_p միջին էներգիան հետազոտվող ենթաթիրախների վրա, իրականացվել են այդ թիրախային համակարգերի պրոտոնային փնջով մի քանի ճառագայթումներ: Այնուհետև իրականացվել է այդ ենթաթիրախների գամմա-սպեկտրաչափական վերլուծությունը ստորգետնյա ցածր ֆոնային լաբորատորիայում: Մասնավորապես, ավարտին են հասցվել ճառագայթված թորիումի և ուրանի թիրախների գամմա-սպեկտրաչափական վերլուծության, ստացված տվյալների մշակման և ֆիզիկական վերլուծության աշխատանքները: Չափվել է պրոտոն-թորիում և պրոտոն-ուրան միջուկային փոխազդեցությունների մի շարք ռեակցիաների կտրվածքների կախումը պրոտոնի էներգիայից՝ $E_p < 18$ ՄեՎ տիրույթում: Ընդհանուր առմամբ չափվել են 21 կտրվածքներ, որոնք վերաբերում են հետևյալ հինգ ռեակցիաներին՝ $^{232}\text{Th}(p,n)^{232}\text{Pa}$, $^{232}\text{Th}(p,3n)^{230}\text{Pa}$, $^{238}\text{U}(p,n)^{238}\text{Np}$, $^{238}\text{U}(p,3n)^{236m}\text{Np}$, $^{238}\text{U}(p,np)^{237}\text{U}$:

Չափման արդյունքները մասամբ լրացնում են տվյալների բացը $E_p < 17$ ՄեՎ տիրույթում և ապահովում են տվյալների որոշակի ճշգրտում՝ նկատի առնելով գոյություն ունեցող տվյալներում առկա տարածայնությունները: Նշված էներգետիկական տիրույթում $^{238}\text{U}(p,np)^{237}\text{U}$ ռեակցիայի կտրվածքի կախվածությունը E_p -ից սույն թեմայի շրջանակներում չափվել է առաջին անգամ: Աստղաֆիզիկական կարևորությունից զատ, սույն թեմայում ստացված ճշգրտված տվյալները կարող են կիրառվել նաև այլ բնագավառներում: Մասնավորապես, $^{232}\text{Th}(p,3n)^{230}\text{Pa}$ ռեակցիայի վերաբերյալ փորձարարական տվյալները կարող են կիրառություն գտնել ճառագայթային բժշկության մեջ, քանի որ ^{230}Pa դուստր-միջուկի բետա-տրոհումից առաջացած ^{230}U ռադիոիզոտոպը՝ իր α -տրոհումների շղթայով հանդերձ, հանդիսանում է α -մասնիկների էֆեկտիվ աղբյուր՝ ուռուցքների խիստ տեղայնացված ճառագայթման համար: Հաշվարկվել, ստեղծվել և C18/18 ցիկլոտրոնի վրա ճառագայթվել է ոսկու ենթաթիրախներ պարունակող թիրախային համակարգը: Գամմա-սպեկտրաչափական վերլուծության արդյունքում ստացվել են նոր տվյալներ $^{197}\text{Au}(p,n)^{197m}\text{Hg}$ ռեակցիայի կտրվածքի վերաբերյալ՝ պրոտոնների $E_p = 9.1, 9.6, 12.4, 13.7$ և 16.9 ՄեՎ էներգիաների դեպքում: Չափման արդյունքները համեմատվել են $E_p = 8 \div 18$ ՄեՎ էներգիաների տիրույթում առկա տվյալների, ինչպես նաև TALYS 1.9 մոդելի կանխագուշակումների հետ: Արդյունքներն ապահովում են տվյալների որոշակի ճշգրտում՝ նկատի առնելով գոյություն ունեցող տվյալներում առկա տարածայնությունները: Նշենք նաև, որ մոդելի կանխագուշակումները չեն նկարագրում ինչպես այս, այնպես էլ այլ աշխատանքների տվյալները:

3. Հետազոտություններ CERN միջազգային կենտրոնում (LHC)

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են ԱՊԳԼ երեք խմբերի պլանային աշխատանքները CERN LHC-ի CMS, ATLAS և ALICE գիտափորձերում: Ի լրացումն ընդհանուր աշխատանքների՝ ընդունվել են նաև նոր պարտավորություններ և իրականացվել են նոր ծրագրեր:

1. 13 ՏԷՎ Էներգիայով pp-բախումների 2016-18թթ CMS (LHC) փորձարարական տվյալներում Վեկտոր-բոզոնային միաձուլման մեխանիզմով H-բոզոնի ծնման և b-քվարկային զույգի տրոհման (VBF $H \rightarrow bb$) պրոցեսի ուսումնասիրության արդյունքները ուղարկվել են տպագրության (JHEP): Ազդանշանի չափված/սպասվող արտահայտվածությունը կազմում է 2.4/2.7 ստանդարտ շեղում $\sigma_{obs} (\sigma_{exp}) = 2.4\sigma (2.7\sigma)$:
2. Կատարվել են հաղորնային կալորիմետրի պայմանների (Էներգետիկ տրամաչափում, Էֆեկտիվություններ և այլն) թարմացման և ներմուծման աշխատանքները: Իրականացվել են նաև CMS գիտափորձի տվյալների բազայի արդիականացման աշխատանքները:
3. FermiLab (ԱՄՆ) CMS խմբի հետ համատեղ իրականացվում է Սուպերսիմետրիկ մոդելներով կանխատեսվող «Երկարակյաց մասնիկների» որոնման աշխատանք CMS փորձարարական տվյալներում, ինչպես նաև ընթանում են ցածր ուժեղացման հեղեղային դիոդների (Low Gain Avalanche Diodes, LGAD) տեստավորման և սենսորների կարդացող էլեկտրոնիկայի մշակման աշխատանքները:
4. CMS գիտափորձի «Phase2-Upgrade» արդիականացման նախագծի շրջանակներում շարունակվել է CMS նոր կալորիմետրական համակարգի (High granularity calorimeter) կոսմիկական մյուոններով տեստավորման համար կառուցվող (ՄՀՄԻ, Դուբնա, ՌԴ) փորձարարական սարքավորման մոդելավորման աշխատանքները: Մշակվել է համակարգի վերջնական դիզայնը: Այս պահին համակարգը CERN-ում է, ավարտվում են կոնստրուկտորական աշխատանքները:
5. Սկսվել են CMS գիտափորձի «Run3» (2022-24թթ) տվյալներում VBF Hbb պրոցեսի մշակման և Հիգգս բոզոնային զույգի ծնման և b-քվարկային զույգերի տրոհման ($HH \rightarrow 4b$) պրոցեսի որոնման աշխատանքները: Կատարվել է 13.6 ՏԷՎ Էներգիայով pp-բախումների 2022թ. տվյալների մշակումը:
6. ATLAS գիտափորձի շրջանակներում մասնակցել ենք TileCal հաղորնային կալորիմետրի «Phase2-Upgrade»-ի հետ կապված օգոստոս-սեպտեմբեր ամիսներին test beam փորձի հերթափոխերին: Կատարվել են երկու ուսանողների համար ընտրված որակավորման ընթացիկ առաջադրանքները. մեկը վերաբերում է ATLAS դետեկտորի TileCal կալորիմետրի մոդուլների բնութագրերի ուսումնասիրությանը SPS-ի H8 փնջատարի վրա հաղորնների (պիոններ, պրոտոններ, կաոններ) 10 ԳԷՎ-ից մինչև 180 ԳԷՎ փնջերով, իսկ մյուսը տեսական հաշվարկներին, մասնավորապես անոմալ եռակի և քառակի կապերին (triple and quartic gauge couplings) էլեկտրաթույլ տեսության մեջ:
7. Այս տարի ԱՊԳԼ-ում պատրաստվել են ATLAS-ի TileCal-ում ցածր լարման աղբյուրների հեռակառավարումն ապահովող AUXboard3-ի համար 80 հատ Front Panel-ներ, որոնք արդեն առաքվել են CERN:
8. ATLAS Distributed Computing Rucio տվյալների կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման նպատակով ծրագրի առաջարկ Արիեստական Բանականության հիմքի վրա:

9. Աշխատանքներ ATLAS գիտափորձի տեխնիկական համակարգում: TDAQ համարգչային ադմինիստրացիա` Point 1-ի տարածքում համակարգչային ենթակառուցվածքների անխափան աշխատանքի ապահովում:
 10. Մեխանիկական, տեխնիկական համագործակցություն: Նախապատրաստական աշխատանքներ դետեկտորի տարեկան սպասարկման համար:
 11. 2023 թվականին շարունակվել են աշխատանքները զարգացնելու 2021 թ. մշակված և հրատարակված BWTP ֆենոմենոլոգիական մոդելը [Eur.Phys.J.A57\(2021\)](#), որը մեծ ճշգրտությամբ նկարագրում է LHC-ի pp և Pb-Pb բախումներում չափված զանազան հադրոնների (պիոնից մինչև չարմոնիում) լայնակի իմպուլսի (p_T) սպեկտրները և դրանց կախվածությունը բախումների կենտրոնականությունից կամ ծնված լիցքավորված մասնիկների բազմակիությունից:
 12. Մասնակցություն ՄՀՄԻ-ի ALICE խմբի հետ տվյալների մշակման աշխատանքներին կապված K^+ , K^- մեզոնների զույգերի կորելյացիաների հետ:
- Գիտական ամսագրերում հրապարակումների ընդհանուր թիվը **128**:

4. ԱՍՊԼ-COMPASS համագործակցություն

2023 թվականի ընթացքում խմբի աշխատանքները կենտրոնացված էին հետևյալ խնդիրների ուսումնասիրության վրա.

1. Drell-Yan պրոցեսի 2018 թ. տվյալների վերլուծություն.

Պիոն-նուկլոն բախումներում երկու լեպտոնների ծնման պրոցեսի լայնակի սպինից կախված ազիմուտային ասիմետրիաների ուսումնասիրում. 2023 թվականին լայնակի սպինից կախված ասիմետրիաների (TSAs) վերջնական վերլուծությունը համարվում էր հիմնական նպատակներից մեկը: Սպինից անկախ ազիմուտային ասիմետրիաների չափումը Drell-Yan-ի պրոցեսում հանդիսանում է ամենադասական մոտեցումներից մեկը` ուսումնասիրելու նուկլեոնի սպինի եռաչափ կառուցվածքը և, ավելի կոնկրետ, լայնակի իմպուլսից կախված (TMD) պարտոնային բաշխման ֆունկցիաները (PDFs):

COMPASS գիտափորձը հավաքել է Drell-Yan-ի տվյալներ 2015 և 2018 թթ.` օգտագործելով 190 ԳԷՎ/վրկ. իմպուլսով π մեզոնների փունջը, որը ընկնում է լայնակի բևեռացված պրոտոնային (NH3) թիրախի վրա: Մոնտե Կարլո հաշվարկների միջոցով ֆոնը գնահատելուց և բոլոր սահմանափակումները կիրառելուց հետո գրանցվում է երկու մյուոնների մոտ 102×103 դեպք: Չնայած սահմանափակ վիճակագրությանը, ներկայացված արդյունքները հաստատում են Sivers TMD PDF-ների նշանների փոփոխությունը: Չափված Sivers TSA-ն համընկնում է մոդելների վերջին կանխագուշակումների հետ [JHEP 02(2021)166], որոնք հաշվի են առնում TMD-ի Էվոյուցիայի էֆեկտները և, հետևաբար, հերքում են Drell-Yan պրոցեսում մեծ Sivers էֆեկտի հնացած ակնկալիքները COMPASS-ի կինեմատիկ տիրույթում:

Լայնակի TSA-ի չափված արժեքը ստացվում է գրոյից ցածր ընդհանուր սխալների երկու ստանդարտ շեղումների սահմաններում: Սա համընկնում է մոդելային կանխագուշակումների հետ և կարող է մեկնաբանվել որպես պիոնների Boer-Mulders TMD PDF-ների կանխագուշակվող նշանի փոփոխության և նուկլոնային լայնակի TMD PDF-ների ունիվերսալության ապացույց: Drell-Yan չբևեռացված կամ բևեռացումից անկախ ասիմետրիաները զանգվածի բարձր տիրույթում: Երեք չբևեռացված ասիմետրիաներ (UA) առկա են Drell-Yan-ի կտրվածքում: Ի տարբերություն սպինից կախված ասիմետրիաների, UA-ի

վերլուծությունը պահանջում է արքեպատանսի ուղղումներ Մոնտե Կարլո հաշվարկների հիման վրա և քննարկվում է առանձին:

2. Կիսահնկյունազիվ (SIDIS) տվյալների վերլուծությունը

Կիսահնկյունազիվ TSA-ների առաջին արդյունքները ստացվել են 2022թ. տվյալներն օգտագործելիս: Մինչև 2023 թ. հունիսի վերջը 2022 թ. ամբողջական ընտրանքը մշակվել և վերլուծվել է: Առաջին արդյունքները ստացվել են բոլոր ութ SIDIS TSA-ների և ամենակարևորը՝ Collins և Sivers ասիմետրիաների համար: Նկար 3-ում 2022 թվականի Collins ասիմետրիաների արդյունքները համեմատվում են COMPASS-ի հին 2002-2004 թթ. դեյտրոնի վրա իրականացված չափումների հետ: COMPASS-ի նոր տվյալները հատկապես կարևոր դեր կխաղան d-քվարկի transversity TMD PDF-ի սահմանափակման գործում և կմնան եզակի SIDIS դեյտրոնի չափումներ հաջորդ տասնամյակների ընթացքում:

Այլ գործունեություն.

- Սպին էստիմացիայի Մատրիցական Էլեմենտների ուսումնասիրումը և չափումը ρ_0 -մեզոնի էքսկլյուզիվ մյուոնաառաջացման ռեակցիայում COMPASS-ում (DVCS-2012 տվյալներ): Մասնակցություն դեպքերի ստուգման և SIDIS ֆոնի մասի գնահատման գործում: Հոդվածն ընդունվել է տպագրության 2023 թ. մայիսին ([EPJC \(2023\) 83 924](#)).
- 2010 թ. երկհադրոնային տվյալների վերլուծություն և Collins-ի և Sivers-ի ասիմետրիաների ուսումնասիրություն SIDIS-ում ծնված ρ_0 -մեզոնների համար (Տրիետա-Տորինո): Մասնակցություն վերլուծության բոլոր փուլերին, ներառյալ դեպքերի ընտրությանը, ասիմետրիայի ստացմանը և տարբեր կինեմատիկական բիններում ֆոնային մասի որոշմանը: Համապատասխան հոդվածը վերջերս լույս է տեսել՝ [Phys.Lett.B 843 \(2023\) 137950](#):
- Collins and Sivers ասիմետրիաները պիոնների և կաոնների զույգերում, որոնք առաջանում են մյուոն-պրոտոն և մյուոն-դեյտրոն կիսահնկյունազիվ ոչառաձգական ցրումներում: Համապատասխան հոդվածը հրատարակվել է 2023 թ. ([PLB 845 \(2023\) 138155](#)):

Գիտական ամսագրերում հրատարակումների ընդհանուր թիվը **3**:

5. Հետազոտություններ Ջեֆերսոնի Լաբորատորիայի՝ JLab-ի A, B, C և D փորձարարական սրահներում

2023 թ. **Փորձարարական A** սրահում կատարվել են հետևյալ աշխատանքները.

1. A սրահում SBS-ի (Super BigBite-Spectrometer) նախագծման, կառուցման և տեղադրման աշխատանքներին հետևեցին հետևյալ գիտափորձերի վերջնական նախապատրաստման և անցկացման աշխատանքները, որոնցում ևս ակտիվ մասնակցություն ունեն ԱՊԳԼ ՓՖԲ-ի մի շարք աշխատակիցներ,

GEP5 - Մեծ արքեպատանսում պրոտոնի ֆորմ ֆակտորի հարաբերության չափումները Large Acceptance 13 և 15 (Q^2/c)² համար՝ օգտագործելով ետհարվածի բևեռացման մեթոդը:

GMN - Նեյտրոնի մագնիսական ֆորմ ֆակտորի չափումը մինչև $Q^2 = 18.0$ (Q^2/c)²: GEN2 - Նեյտրոնի էլեկտրամագնիսական ֆորմ ֆակտորի G_nE/G_nM հարաբերության չափումը բարձր Q^2 -ի համար: GMN գիտափորձը ավարտվել է, և հիմա կատարվում է ստացված արդյունքների մշակում: Այս պահին կատարվում է GEN2 գիտափորձը, որը կավարտվի 2024 թվականին: Հաջորդ գիտափորձը GEP5-ն է, որը պլանավորված է 2024 թվականի աշնանը:

2. GEP5 գիտափորձի հիմնական դետեկտորներից մեկը Էլեկտրամագնիսական կալորիմետրն է, որը կառուցվելու է 1656 34 x 34 x 340 մմ³ կապարային ապակիներից, և ունենալու է մոդուլային կառուցվածք: Յուրաքանչյուր մոդուլ բաղկացած է լինելու 9 կապարային ապակուց: Սուպերմոդուլների ընդհանուր քանակը 184-ն է:
3. Ինչպես հայտնի է, կապարային ապակին ճառագայթումից դեղնում է և կորցնում է թափանցելիությունը, իսկ դա բերում է կալորիմետրի լուծողականության վատացմանը: Կապարային ապակու թափանցելիության վերականգնման համար որոշվեց ամբողջությամբ տաքացնել և տաք պահել կալորիմետրը գիտափորձի ընթացքում:

Փորձարարական B սրահում շարունակվել են RGA և RGB փորձերի տվյալների վերլուծության աշխատանքները E12-12- 001, E12-12-001A, E12-11-103B, E12-07-104A նախագծերի շրջանակներում.

1. Կատարվել է E12-12-001 (RGA) և E12-011-103B (RGB) փորձերի տվյալների մշակում արոտոնային և դեյտրոնային թիրախների վրա J/ψ-մեզոնի շեմին մոտ էքսկլուզիվ ֆոտոծնման դեպքերի ուսումնասիրություն: Ընթացիկ տարում կատարվել է ուսումնասիրություններ CLAS12 դետեկտորի տվյալների հիման վրա J/ψ-մեզոնի ֆոտոծնման թեմայի շրջանակներում: Աշխատանքները շարունակվել են E12-12-001 գիտափորձի համար գեներացված տվյալների հիման վրա: Մշակումների նպատակը՝ J/ψ-մեզոնի շեմին մոտ էքսկլուզիվ ֆոտոծնման ուսումնասիրության միջոցով արոտոնի գյուղնային ֆորմ ֆակտորի դուրս բերումն է՝ չափելով լայնական կտրվածքի կախվածությունը փոխանցված քառաչափ իմպուլսից, և շեմին մոտ ($E_{\text{center}} = 8.2$ ԳԷՎ) լրիվ լայնական կտրվածքի վարքագծից (ծնման եղանակի պարզաբանման նպատակով):
2. Շարունակվել են E12-07-104A փորձի տվյալներից դեյտրոնի թիրախի վրա վեկտոր մեզոնների կոհերենտ ծնման կոշտ էքսկլուզիվ ռեակցիաների ուսումնասիրությունները: Նպատակը գունային թափանցիկության (Color Transparency, CT) ուսումնասիրությունն է: Այս ուղղությամբ արվել են հետևյալ աշխատանքները.
 - Իրականացվել է դեպքերի ընտրման հետևողական վերլուծություն՝ այն տվյալների, որոնցում վերջնական վիճակում հայտնաբերվել են վեկտորական մեզոնի տրոհման արգասիքներ ($\pi+\pi^-$), e^+ ցրված Էլեկտրոն և d^+ ետհարվածի դեյտրոն:
 - Հետազոտվող ռեակցիայի Մոնտե Կարլո խաղարկումներ, որոնց օգնությամբ ստացվել է ակտեպտանսի գործակիցը, և որը թույլ տվեց որոշել հետազոտման ֆիզիկական (կինեմատիկ) տիրույթը:

2023 թ. տվյալ հետազոտման արդյունքների հիման վրա ԵՊՀ-ում տեղի է ունեցել դիպլոմային աշխատանքի պաշտպանություն՝ մագիստրոսի կրթական աստիճանի հայցման նպատակով:

3. ԱԳԼ-Պաբ համագործակցության խումբը կատարել է նաև սերվիսային աշխատանքներ, մասնավորապես SVT և BMT դետեկտորների վրա հավասարեցման և Էֆեկտիվության գնահատման աշխատանքներ: Աշխատանքի նպատակն է՝ օգտագործելով հավասարեցման և Էֆեկտիվության մշակված մեթոդները, առավել ճշգրտել և արդյունավետ օգտագործել ստացված փորձարարական տվյալները:

Ընթացիկ տարում կատարվել են դետեկտորի Էֆեկտիվության գնահատում օգտագործելով Պաբ-ում մշակված մեթոդը: Մեթոդի հիմքում

ընկած է լիցքավորված մասնիկների քանակի հարաբերությունը էլեկտրոնների քանակի վրա: Ստացված հարաբերությունները գնահատվում են տարբեր սահմանափակումների և հոսանքի ուժերի համար: Հարաբերության բաշխվածությունից ածանցվում է էֆեկտիվության բաշխվածությունը տարբեր հոսանքի ուժերի համար, այդպիսով գնահատվում է դետեկտորի գրանցման և հավասարեցման էֆեկտիվությունները: Հաջորդ քայլով գնահատվեց SVT դետեկտորի էֆեկտիվությունը սեկտորներում:

Աշխատանքները կատարվում են E12-12-001 (RGA) և E12-011-103B (RGB) փորձերի տվյալներն օգտագործելով: Ներկայումս ստացված գնահատականները մոտենում են ակնկալվածներին:

Փորձարարական C սրահում կատարվող գիտական ծրագրեր

Հաշվետու տարում ԱԱԳԼ խումբը, ինչպես նախորդ տարիներին, մասնակցել է Թոմաս Ջեֆերսոնի անվան լաբորատորիայի հետ համատեղ C սրահում կատարվող գիտական ծրագրերին: Խումբը կարևոր ներդրումներ է ունեցել հետևյալ աշխատանքներում`

1. Չեզոք մասնիկների սպեկտրոմետրի նախագծի հետ կապված աշխատանքներ

Ջեֆերսոնի լաբորատորիայի NPS սպեկտրոմետրը նախատեսված է չեզոք մասնիկների գրանցման համար (γ , π^0): Այն բաղկացած է բեկող մագնիսից` ցածր էներգետիկ լիցքավորված ֆոնային մասնիկներից ազատվելու համար, և 1080 կապարի վոլֆրամատի ($PbWO_4$) բյուրեղներից բաղկացած էլեկտրամագնիսական կալորիմետրից: Ներկայումս NPS-ի ֆիզիկական ծրագիրն ընդգրկում է 6 հաստատված գիտափորձ, որոնցից մեկին (π^0 -SIDIS) համահեղինակ է ԱԱԳԼ-ի խումբը:

Ընթացիկ տարում փորձարկվել է մագնիսը, քարտեզագրվել է նրա դաշտը: Տեղակայվել են կալորիմետրի Ֆոտո-էլեկտրոնային Բազմապատկիչները (ՖԷԲ) և բարձր լարման բաժանիչներ:, Հավաքվել են էլեկտրոնիկայի և բարձր լարման սնուցման համակարգերը, անց են կացվել սնուցման և ազդանշանային մալուխները: Կալորիմետրը ստուգվել է լաբորատոր պայմաններում:

Առաջին կատարվելիք գիտափորձերն են.

- E12-13-010: Էքսկյուզիվ խորը-վիրտուալ Կոմպտոնյան ցրման և չեզոք պիոնի ծնման կտրվածքների չափում,
- E12-13-007: Ֆակտորիզացիայի հաստատման նպատակով π^0 -ի կիսա-ինկյուզիվ ծնման կտրվածքի չափում,
- E12-22-006: Խորը վիրտուալ Կոմպտոնյան ցրում նեյտրոնից:

2. HMS սպեկտրոմետրի անրոգելային դետեկտորի հետ կապված աշխատանքներ

HMS-ի չերենկոպյան անրոգելային դետեկտորը կառուցվել է ԱԱԳԼ-ի խմբի անմիջական մասնակցությամբ: Այն բաղկացած է երկու մասից. անրոգելային խցից, որը պարունակում է չերենկոպյան ռադիատորի նյութը, և դիֆուզիոն խցից, որը նայվում է չերենկոպյան լույսի գրանցիչներով: Կան 2 անրոգելային խցեր, որոնք համապատասխանաբար պարունակում են $n=1.05$ և 1.30 բեկման ցուցչով, ~ 10 սմ հաստությամբ անրոգելային նյութ: Վերջին գիտափորձերում դետեկտորի օգտագործման ընթացքում նկատվել էր նրա ազդանշանի որոշ անկում: Դետեկտորը լավացնելու փորձ կատարվեց: Փոխվեց դիֆուզիոն խցի անդրադարձիչը` ավելի էֆեկտիվ, VM2000 տիպի թաղանթով: Նորացվեցին անրոգելի վերին 2 շերտը` զումարային ~ 2 սմ հաստությամբ: Փչացած բոլոր ՖԷԲ-երը փոխարինվեցին նույն տրամաչափի,

ET9823 տիպի նոր ՖԵԲ-երով: Կոսմիկական ճառագայթներով դետեկտորի ստուգումը ցույց տվեց որոշակի լավացում, բայց ոչ այն աստիճանի, որ այն օգտագործվի արագացուցչային գիտափորձում: Ուղիներ են մշակվել դետեկտորի աշխատանքը բավարար մակարդակի հասցնելու համար:

3. Ժամանականման Կոմպտոնյան ցրման (TCS) նախագծի հետ կապված աշխատանքներ

Ժամանականման Կոմպտոնյան ցրման (TCS) գիտափորձի նախագիծը միտված է ընդհանրացված պարտոնային բաշխումների (GPD) ուսումնասիրմանը, մասնավորապես՝ GPD E ֆունկցիայի հետազոտմանը, որն առնչվում է նուկլոնում պարտոնների շարժման անկյունային մոմենտին: Նախագիծը ներկայացվել է Jlab-ի հետազոտական ծրագրերի կոմիտեին (PAC 50) 2022 թվականին և առկախվել՝ ի նկատի առնելով պահանջվող հավելյալ նախապատրաստական հետազոտությունների ծավալը:

Հաշվետու ժամանակաշրջանում (2023թ.) ԱՍԳԼ-Jlab կոլաբորացիայի անդամները մասնակցել են D փորձարարական սրահում կատարվող GlueX գիտափորձի աշխատանքներին՝ մասնավորապես.

1. Առաջնային կալորիմետրի (FCAL2) ազդանշանային, բարձր և ցածր լարման մալուխների պատրաստման, համարանշման և մասամբ կալորիմետրից մինչև էլեկտրոնիկա անցկացմանը,
 2. ֆոտոբազմապատկիչային խողովակների և դրանց բարձր բաժանարարների - տեստավորմանը,
 3. 1600 հատ PbWO4 բյուրեղային մոդուլների պատրաստմանը,
 4. FCAL2-ի բոլոր մոդուլները շրջանակի մեջ հավաքմանը,
 5. LMS-ի (Լույսահիմն մշտադիտարկման համակարգ) նախագծմանը և հավաքմանը:
 6. Մասնակցել են 20 հեռավար հերթափոխների (shifts):
- Հրապարակումներ գիտական ամսագրերում - ընդհանուր թիվը՝ 15:

6. Չերենկովյան դիտակների օգնությամբ աստղաֆիզիկական աղբյուրների ուսումնասիրում (HESS և CTA)

ԱՍԳԼ-ի ՓՖԲ-ի Չերենկովյան դիտակների օգնությամբ աստղաֆիզիկական աղբյուրների ուսումնասիրման (H.E.S.S. և CTA) խումբը 2023 թ. ընթացքում շարունակել է հետազոտությունները շատ բարձր էներգիաների (ՇԲԷ, մի քանի տասնյակ ԳԷՎ-ից մինչև մի քանի հարյուր ՏԷՎ տիրույթ) Վ-ճառագայթների աստղաֆիզիկայի բնագավառում:

Խումբը մասնակցել է H.E.S.S. (High Energy Stereoscopic System) համագործակցության աշխատանքներին, հետազոտել մինչև 100 ԳԷՎ էներգետիկ տիրույթում մթնոլորտային հեղեղների չերենկովյան պատկերների «մաքրման» և դրանք նկարագրող նոր պարամետրերի մշակման հնարավորությունները՝ Վ-դեպրերի առանձնացման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով: Վերջինս իրականացվել է Cherenkov Telescope Array (CTA) համագործակցության Large-Sized Telescope (LST, տրամագիծը՝ 23 մ, տեղակայման բարձրությունը՝ 2200 մ) պատկերային մթնոլորտային չերենկովյան դիտակի (ՊՍՉԴ) դեպքում մոդելավորված տվյալների բանկի օգնությամբ:

H.E.S.S.-ի կողմից 2023թ. շարունակվել է տարբեր դասերի աստղաֆիզիկական աղբյուրների ուսումնասիրությունը, մասնավորապես հետազոտվել է PKS 1510–089 քվազարի ճառագայթումը 2021-2022թթ. ընթացքում և կատարվել PKS 0735+178 բլազարի թիրախային դիտումներ: Գրանցվել էր PKS 1510–089 քվազարի ճառագայթման հոսքի զգալի նվազում

բարձր էներգիաների (ԲԷ, $E > 100$ ՄԷՎ) γ -ճառագայթների (10 անգամ) և օպտիկական (5 անգամ) տիրույթներում, ինչը շարունակվել էր նաև ողջ 2023թ.-ին:

2023թ. իրականացվել են նաև աշխատանքներ ցածր էներգիաների (մինչև 100 ԳԷՎ) գամմա հեղեղների առանձնացման արդյունավետ եղանակ մշակելու ուղղությամբ: Այդ նպատակով օգտագործվել է CTA հյուսիսային դիտակայանի 23 մ տրամագծով LST1 դիտակի համար ստեղծված Մոնտե Կարլո բանկը: Բանկը բաղկացած է սկզբնական գամմա-քվանտներից և տիեզերական ճառագայթների մաս կազմող պրոտոններից ու էլեկտրոններից առաջացած մթնոլորտային հեղեղների չերենկոպյան պատկերներից և դրանց նախնական «մաքրման» ու մաթեմատիկական վերլուծության արդյունքներից: Գամմա-քվանտներն ու էլեկտրոնները գեներացվել են սկսած 2 ԳԷՎ-ից՝ դիտակի շուրջ 750 մ շառավիղ ունեցող շրջանում, իսկ պրոտոնները՝ սկսած 10 ԳԷՎ-ից և գեներացման շառավիղը կազմել է 1000 մ: Չերենկոպյան պատկերների գրանցումը մոդելավորվել է ինչպես առանց գիշերային երկնքի ֆոնի, այնպես էլ դրա առկայության պայմաններում: Գամմա- և պրոտոն-պատկերների համար ցույց է տրվել, որ «մաքուր» պատկերների դեպքում Alpha պարամետրով կարելի է հասնել ազդանշանի առանձնացման արդյունավետության բարելավման 1.19-ից մինչև 1.45, իսկ երեք պարամետրի դեպքում՝ 1.63-ից մինչև 1.79 գործակիցների, երբ “Size” պարամետրը փոխվում է 40-ից մինչև 100ֆե և բացակայում է որևէ սահմանափակում “Dis”-ի վրա

Գիտական ամսագրերում հրապարակումների ընդհանուր թիվը 6-ն է:

7. Մասնակցություն EIC համագործակցության աշխատանքներին

Էլեկտրոն-իոնային կոլայդերը (EIC), որն այժմ կառուցվում է ԱՄՆ Բրուքհեյվենի ազգային լաբորատորիայում (BNL), լինելու է մասնիկների եզակի արագացուցիչ, որտեղ էլեկտրոնները բախվելու են պրոտոնների և միջուկների հետ՝ նուկլոնի ներքին կառուցվածքը մանրակրկիտ ուսումնասիրելու համար: EIC-ի գիտական ծրագիրը ներառում է բարձր էներգիայի ֆիզիկայի ամենակարևոր և հիմնական հարցերը, ինչպիսիք են՝ նուկլոնի սպինի ծագումը, նուկլոնի և միջուկի եռաչափ կառուցվածքը, գյուլոնի դերը միջուկի կառուցվածքում, հադրոնային զանգվածի ծագումը, Ճշգրիտ էլեկտրա-թույլ փոխազդեցությունը և ստանդարտ մոդելից դուրս ֆիզիկան:

ԱՎԳԼ-ն EIC-ի ֆիզիկական ծրագրին և նրա էլեկտրամագնիսական կալորիմետրի նախագծման և կառուցման աշխատանքներին միացել է 2020 թվականին: Տեղում աշխատանքները հիմնականում կատարվում են ԱՎԳԼ-ի դետեկտորների և մեթոդիկ ուսումնասիրությունների լաբորատոր սենյակում: Ընթացիկ տարում սենյակը համալրվեց ժամանակակից էլեկտրոնիկայի նոր բլոկներով և սարքավորումներով: Խմբում կատարվել են էլեկտրամագնիսական կալորիմետրին վերաբերվող մոդելային հաշվարկներ, կալորիմետրի նախատիպի կառուցում և ուսումնասիրում:

8. PbWO₄ բյուրեղների բնութագրերի ուսումնասիրում՝ EIC-ի կալորիմետրի նախատիպի կառուցման համար

EIC-ի էլեկտրամագնիսական կալորիմետրի շատ տեխնիկական մշակումներ դեռևս գտնվում են զարգացման փուլում, և պահանջում են լրացուցիչ ուսումնասիրություններ: EIC-ի համագործակցության խմբերը PbWO₄ բյուրեղներից էլեկտրամագնիսական կալորիմետրի (EmCal) մի քանի նախատեսակներ են կառուցել (3×3, 5×5 և 12×12 շարվածքի): Խումբը

մասնակցել է Jlab-ում 3x3 և 5x5 շարվածքի նախատիպերի ուսումնասիրություններին, միաժամանակ ԱՎԳԼ-ում կառուցելով նախատիպի 4x4 տարբերակը:

Նախատիպի կառուցման համար ընթացիկ տարում ձեռք են բերվել անհրաժեշտ 20 PbWO₄ բյուրեղներ, որոնք նախօրոք մանրամասն ստուգվել են: Այս մեթոդիկ աշխատանքը ներառել է.

- Բյուրեղների որակի և չափսերի ստուգում,
- Բյուրեղների օպտիկական թափանցիկության չափումներ,
- Բյուրեղից գրանցված լույսի ելքի չափումներ:

Չափումները կատարվել են օգտվելով ԱՎԳԼ-ի դետեկտորների և մեթոդիկ ուսումնասիրությունների լաբորատոր սենյակի սարքավորումներից:

9. EmCal կալորիմետրի նախատիպի կառուցում և ուսումնասիրություններ

ԱՎԳԼ-ում նախագծվել և կառուցվել է 4x4 շարվածքով, PbWO₄ բյուրեղներով կալորիմետրի նախատիպ: Այն մանրամասն ստուգվել է կոսմիկական մյուոններով, հետագայում կստուգվի նաև LUE-75 էլեկտրոնային և C18 ցիկլոտրոնի պրոտոնային փնջերով: Նախքան նախատիպի հավաքումը պատրաստվել են բոլոր մեխանիկական մասերը, չափվել և ընտրվել են PbWO₄ բյուրեղները, ստուգվել են ՖԷԲ-ները և նրանց բարձր լարման բաժանիչները: Նախապատրաստվել են ազդանշանային և բարձր լարման մալուխները, էլեկտրոնիկան և DAQ համակարգը:

ՖԷԲ-ի ազդանշանները գրանցվում են տվյալների հավաքման էլեկտրոնային համակարգով: Դրանք թվայնացվում են 12 բիթ ինտեգրող տեսակի CAEN V792N QDC անալոգ-թվային փոխարկիչով: Տվյալների հավաքման և գրանցման ծրագիրը հիմնված է CAEN ֆիրմայի ընդհանուր կոդի վրա, որը նախատեսված է «CAEN VME to USB-2.0/Optical Link Bridge» մոդուլի միջոցով QDC, TDC և դիսկրիմինատորների հետ աշխատելու համար: Մեր դեպքում այն հարմարեցված է QDC-ի հետ աշխատելուն: Այն տեղակայված է Fedora Linux օպերացիոն համակարգի տակ աշխատող համակարգչի վրա, որը կցված է վերահսկող մոդուլին USB տիպի մալուխով: Հավաքված տվյալները մշակվում են ROOT տվյալների մշակման ծրագրային փաթեթով:

Նախատիպը ուսումնասիրվել է կոսմիկական ճառագայթներով: Կոսմիկական մյուոններից տրիգեր ձևավորելու համար օգտագործվել է երկու միանման սցինտիլյացիոն հաշվիչներ՝ տեղակայված դետեկտորից վերև և ներքև: Այս հաշվիչների ազդանշաններն, անցնելով 20 mV շեմով “CAEN 16 Channel N843 CFD” մոդուլով, ձևավորում են 40 նվ տևողության NIM ստանդարտի ազդանշաններ, որոնք հաջորդ “N455 Logic Unit” համընկման մոդուլում առաջացնում են 120 նվ լայնության դարպաս (Gate)՝ QDC լիցք-թվային փոխարկիչի համար:

Հրապարակումներ գիտական ամսագրերում - ընդհանուր թիվը՝ 9:

10. Ռեալ և վիրտուալ ֆոտոններով միջուկների ճեղքման և ֆրագմենտացիայի ուսումնասիրություններ

Ուսումնասիրություններն իրականացվել են հետևյալ նախագծերի սահմաններում՝

1. Պիկովայրկյանային լուծողականությամբ երկրորդական էլեկտրոնների դետեկտոր \wedge հիպերմիջուկների հետազոտությունների համար»,

2. ԿԷՎ Էներգիաներով Էլեկտրոնների գերբարձր հաճախությունների պարուրածն սկանավորող համակարգ,
3. Պիկովայրկյանային ճշտություններով նանոկառուցվածքների քվանտային վիճակների կյանքի տևողությունների սենսոր,
4. Ծանր միջուկների ինքնակամ և հարկադրական բաժանման հազվագյուտ պրոցեսներ,
5. Ռադիոհաճախություններով կառավարվող ժամանակաչափ և հիպերմիջուկային ուսումնասիրությունների նոր հնարավորություններ:

Շարունակվել են ՌՀ թայմերի նախատիպի տեսական և փորձարարական ուսումնասիրությունները: Կառուցվել է հիպերմիջուկների կյանքի տևողության չափումների համար մշակված ծանր իոնների դետեկտոր, որի փորձարկումները շարունակվում են:

Շարունակվել են ուսումնասիրությունները 500 ՄՀց-ից բարձր ՌՀ հաճախականությունների տիրույթում, ցույց է տրվել, որ համակարգը կարող է ապահովել Էլեկտրոնների սքանավորում մինչև 1700 ՄՀց: Կատարվել են ֆոկուսացման ոսպնյակի և ընդհանուր համակարգի օպտիմիզացմանը ուղղված Մոնտե Կարլո հաշվարկներ: Կառուցվել է նանոկառուցվածքների ուսումնասիրությունների համար նախատեսված նոր դետեկտոր, նանոկառուցվածքների ուսումնասիրությունները ակտիվ փուլում են:

Մշակված սարքավորումը արտոնագրվել է Հայաստանում (“RF Timer for single electrons and photons”, H01J 25/00), գործընթաց է սկսվել ԱՄՆ արտոնագիր ստանալու ուղղությամբ:

Հրապարակումներ գիտական ամսագրերում - ընդհանուր թիվը` 2:

11. Հետազոտություններ նյութագիտության ոլորտում

ա) Խիտոզանի նոր ածանցյալների սինթեզ և ուսումնասիրություն

2023 թ.-ին, շարունակվել է խիտոզանի Խ2-(Խ2-CS) հիման վրա նոր Շիֆֆի հիմքերի (ԽՇՀ-CSSB) սինթեզը և սինթեզված համակարգերի ուսումնասիրությունները.

1. Սինթեզվել և ուսումնասիրվել ենք նաև ջրալույծ օքսիկարբօքսիմեթիլ խիտոզա O-ԿՄԽ2 (O-ԿՄԽ2 / O-CM-CS), որպես էլանյութ ևս օգտագործելով մեր կողմից սինթեզված Խ2:
2. Սինթեզված արգասիքները բնութագրվել են`
 - թերմոգրավիմետրիկ անալիզի` թերմոգրավիմետրիա-դիֆերենցիալ սկանավորվող կալորիմետրիա (TG-DSC);
 - մոլեկուլյար սպեկտրոսկոպիայի` տեսանելի լույսի ինֆրակարմիր տիրույթում (FTIR-ATR), մեթոդներով:

Ուսումնասիրվել են Մոլեկուլյար սպեկտրոսկոպիայի` տեսանելի լույսի ինֆրակարմիր տիրույթում (FTIR-ATR) նմուշների կլանման սպեկտրոնները:

Հետազոտությունները շարունակվում են նպատակ ունենալով սինթեզել ուսումնասիրությունների համար անհրաժեշտ քանակությունների նմուշներ և նոր բաղադրությամբ խիտոզանային ջրալույծ ածանցյալներ:

բ) Նանոկառուցվածքների և նանոնյութերի ուսումնասիրություններ

Հաշվետու ժամանակահատվածում խումբը կատարել է լեգիրացման միջոցով գրաֆենի օպտիկական և Էլեկտրոնային հատկությունների մոդուլացիային վերաբերվող հետազոտություններ.


1. Լեգիրացման շնորհիվ հնարավոր է լինում բարձրացնել Ֆերմիի մակարդակի դիրքը գրաֆենի գոտիական կառուցվածքում, ինչի արդյունքում հաղորդականության գոտում առաջանում են զբաղեցված վիճակներ: Այլ կերպ ասած ավելանում է հաղորդականության Էլեկտրոնների քանակը, ուստի,

Եականորեն բարելավվում է թաղանթի հաղորդականությունը, և Վոլտ Ամպերային Բնութագիրն (ՎԱԲ) ունենում է գծային տեսք: Սակայն 18 ՄԷՎ Էներգիայով պրոտոնային փնջով ճառագայթման դեպքում նկատվել է, որ լեգիրացվածությունն ապահովող քիմիական կապերը քանդվել են և ՎԱԲ-ը կրկին ընդունել է իր նախնական ոչ գծային տեսքը: Խումբը հանգել է եզրակացության, որ հաղորդականության գոտում զբաղեցված վիճակների առկայությունը հանգեցնում է գրաֆենի գոտիական կառուցվածքում Ֆերմիի մակարդակի տեղաշարժի և օպտիկական հատկությունների փոփոխության:

Պաուլիի արգելակման էֆեկտի արդյունքում ճնշվում է օպտիկական կլանումը ինֆրակարմիր տիրույթում: Մյուս կողմից էլ, հաղորդականության գոտում էլեկտրոնների առկայությունը նպաստում է ներգոտիական անցումների ուժեղացմանը, որը հանգեցնում է անդրադարձման ուժեղացմանը: Այսպիսով նվազում են կլանումն ու թափանցելիությունը և ուժեղանում է անդրադարձումը: Դա երևում է կերակրի աղի բյուրեղի լեգիրացված գրաֆենի շերտով պատելուց առաջ և հետո ինֆրակարմիր թափանցելիության չափմամբ:

2. Իրականացվել են նաև մեծածավալ ջերմատեսիլային հետազոտություններ: Խումբը նախ համոզվել է, որ գիտափորձերում կիրառվող պոլիէթիլենի (ծակոտկեն և ոչ ծակոտկեն) թաղանթները և չլեգիրացված գրաֆենի շերտերը թափանցիկ են ջերմատեսիլային սարքերի համար: Ընդ որում ստացվել է, որ նույնիսկ շերտերի քանակը մի քանի տասնյակի հասցնելուց հետո, գրաֆենային թաղանթը մնում է թափանցիկ ջերմատեսիլի համար: Այս ջերմատեսիլի համար թափանցիկ թաղանթների կիրառմամբ պատրաստվել են գրաֆենային հիմքով շերտավոր կառուցվածքներ, որոնց ջերմատեսիլային (ինֆրակարմիր) թափանցելիությունը հնարավոր է կառավարել լարման կիրառմամբ:

3. Մեկ այլ գիտափորձի շրջանակում 18 Վ լարմամբ առաջացվել է էլեկտրական հոսանք գրաֆեն/պոլիէթիլեն թաղանթի տակ գտնվող ապակու մակերևույթին նստեցված ITO (նույնը նաև ոսկու դեպքում) բարակ շերտով: Արդյունքում շերտը տաքացել է, սակայն ITO/ապակի հարթակի տաքացումը չի հանգեցրել գրաֆենային շերտի տաքացման, և վերջինս շարունակում է իրականացնել ջերմային քողարկում: Մյուս կողմից, կան դեպքեր, երբ ջերմային քողարկման կառավարելիությունը (պայմանավորված լարման կիրառման անհրաժեշտությամբ) պարտադիր չէ, և անհրաժեշտ է ունենալ բարակ ու ճկուն թաղանթ, որը կիրականացնի ջերմային ճառագայթների քողարկում: Այդ դեպքում կարող են կիրառվել հեղուկ փուլային շերտազատման հետ միաժամանակյա լեգիրացված գրաֆենային թաղանթներ:




Կիրառական ֆիզիկայի հետազոտությունների բաժին

Ղեկավար՝ Վ.Վ. Հարությունյան
Հաշվետու ժամանակահատվածում **Կիրառական ֆիզիկայի հետազոտությունների բաժին** իրականացրել է հետևյալ հետազոտությունները.


Ճառագայթային կենսաֆիզիկայի խմբի (240/1) 2023 թվականի գիտահետազոտական գործունեության հակիրճ նկարագրություն.

Ընթացիկ տարում շարունակվել են մանրէների վրա գերկարճ էլեկտրոնային փնջերի (CANDLE, AREAL) ազդեցության հետազոտությունները: Հետազոտվել է այդ մանրէների ճառագայթահարումը թթվածնի բացակայության և մաքուր թթվածնով հագեցած միջավայրի պայմաններում: Ստացված արդյունքները ներկայացված են Նկ. 1-ում: Ինչպես ցույց տվեցին ստացված արդյունքները, առավել հավաստի եզրակացություն անելու համար անհրաժեշտ է հետազոտել ավելի բարձր դոզաների տիրույթը, ինչը այժմ ընթացքի մեջ է:




Նկ. 1. Մանրէների կախույթի գազային կազմի ազդեցությունը մանրէների գոյատևման վրա: 1-օդ, հսկիչ միջավայր, 2-ազոտ, 3-թթվածին:

Շարունակվել է նաև գերկարճ փնջերով հարուցված մուտագենեզի հետազոտումը, որի նպատակն է ստանալ որոշակի քսենոբիոտիկներ մեծ ակտիվությամբ քայքայելու ընդունակ շտամներ: Փորձերում ներգրավվել են մի քանի բակտերիալ շտամներ: Նկ. 2-ում ներկայացված է կատարված փորձերից մեկի արդյունքները: Մի քանի նման փորձերում ստացված առավել ինտենսիվ աճ ցուցաբերած մուտանտները հետազոտվում ստուգվել են մանրէաբանական խոզանակի օգնությամբ էլեկտիվ միջավայրերի վրա ցանքսի միջոցով (տես՝ Նկ. 3):



Նկ.2. 10Gy դոզայով ճառագայթահարումից հետո «Աքտարա»-ի սկատամամբ տոլերանտ շտամների աճը թիամետոքսամ պարունակող ազարի վրա: M- դրական մուտացիայի ենթարկված մանրէներ, N- նորմալ մանրէներ:



Նկ.3. Մուտանտ մանրէների աճը էլեկտրոլ միջավայրերի վրա: Ձախից թիամետոքսամի ներկայությամբ, աջից՝ ակտարաի:

Այս հետազոտությունները շարունակվում են: Ենթադրվում է հետազոտել նաև դոզաների ավելի ցածր տիրույթ՝ որպես ճառագայթահարման օբյեկտ օգտագործելով արդեն իսկ ստացված մուտանտները: Այս արդյունքները առավել հետաքրքրություն են ներկայացնում, քանի որ ներկայումս Դուբնայի JINR ինստիտուտի կոլեգաների հետ (Վ.Կոռոզոդինսա) համատեղ քննարկումներ են ընթանում հետազոտական նախագիծ ձեռնարկելու նպատակով:

Ուսումնասիրվում է նաև իմպուլսային էլեկտրոնային ճառագայթների ազդեցությունը այլ կենսաբանական օբյեկտների վրա, մասնավորապես հետազոտվել են մեկուսացված ԴՆԹ-ի և ԴՆԹ/պորֆիրին կոմպլեքսների վրա տարբեր դոզայով ճառագայթահարման ազդեցությունը: Ստացված արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս ենթադրել, որ 1 Gy դոզայով ճառագայթահարման դեպքում արդյունքը ավելին է, քան 2 Gy կամ 4 Gy դոզաների դեպքում: 1 Gy ճառագայթման դոզայի դեպքում պորֆիրինի առկայությունը բերում է ԴՆԹ-ի կայունացմանը: 2 Gy ճառագայթման դոզայի դեպքում պորֆիրինի առկայությունը բերում է ճառագայթահարման

ազդեցության ուժեղացմանը: Հետազոտությունները ցույց են տվել, որ ԴԼԹ/պորֆիրին կոմպլեքսի վրա Ճառագայթման ազդեցությունը կախված է օգտագործված մետաղապորֆիրինների տեսակից (CuTOEPyP4 ZnTOEPyP):

**Փնջերի դիագնոստիկայի (240/2) խմբի հիմնական գիտական ուղղությունները՝
1. Բարակ լազերային փնջերի տոմոգրաֆիա և նախորդող աշխատանքներ, նոր
Էլեկտրոնային չափման համակարգի և դրա ծրագրային ապահովման մշակում:**

Շարունակվել են տոմոգրաֆիկ պատկեր ստանալու հետազոտությունների շարքը: Քանի որ տոմոգրաֆիկ պատկերը պահանջում են պրոֆիլների մշակման տարբեր սկանավորման ուղղություններ և պրոյեկցիաներ, մեր կողմից մշակվել է նոր չափման համակարգ՝ համապատասխան ծրագրային ապահովումով: Նոր համակարգը բաղկացած է արագ տրանսֆորմացիոն օպերացիոն ուժեղացուցից (OPA683) և արագ ֆոտոդիոդից (SFH213FA): Նոր ծրագիրը թույլ է տալիս վերականգնել ֆոկուսացված լազերային փնջի պրոֆիլը գալիորեն կրճատելով պրոֆիլավորման ժամանակը, նաև ճշգրիտ որոշել լարի տատանման պարբերությունը և փուլը : Լարը հանդես է գալիս որպես միևնույն սկաներ, քանի որ լարի ամպլիտուդը համապատասխան է փնջի չափերին: Մշակված ալգորիթմը թույլ է տալիս միևնույն փուլի և կորի լայնության գնահատման ժամանակը՝ հասցնելով դրանք միևնույնի և ճշգրիտ որոշել չափման սխալները:

2.CANDLE Սինքրոտրոն հետազոտությունների ինստիտուտի AREAL արագացուցիչ Էլեկտրոնային փնջերի վրա նոր 64 PIN-ֆոտոդիոդների վրա հիմնված մատրիցային դիագնոստիկ համակարգի մշակում:

Հավաքվել և AREAL արագացուցիչի Էլեկտրոնային փնջերի վրա փորձարկվել է նոր 64 PIN-ֆոտոդիոդների վրա հիմնված մատրիցային դիագնոստիկ համակարգ, որի նպատակն է գնահատել AREAL արագացուցիչի մոդերնիզացված տարբերակի Էլեկտրոնային փնջի կորուստները SASE 101 օնդուլյատորի վակուումային խցիկից: Մշակվել է մոտ 1 վ ինտեգրման ժամանակով Էլեկտրոնային իմպուլսների գրանցման ինտեգրալ շղթա: Նման սխեման հնարավորություն տվեց գրանցել ինչպես մուգ հոսանքը, որի տևողությունը ՌՀ արագացման դաշտի փուլի կարգի է, այնպես էլ ֆոտոկաթոդի վրա ընկնող լազերային իմպուլսի տևողությամբ կարճ Էլեկտրոնային բանջերը:

3. Ինստիտուտի ինժեկտորի Էլեկտրոնային փնջի պրոֆիլավորում տատանվող լարի մոնիտորով՝ նոր չափման համակարգի մշակում:

Մշակման փուլում է գտնվում XY - կայանի պատրաստումը ինստիտուտի ինժեկտորի Էլեկտրոնային փնջի պրոֆիլավորման համար: Կայանը իրենից ներկայացնում է երկու տատանվող լարի մոնիտորներով հավաքված համակարգ, որոնց սկանավորման պրոցեսը իրականացվում է քայլային շարժիչներով:

4. Մետաղական լարերի փխրունության և կարծրացման հետազոտություններ:

Նախնական փորձեր են իրականացվել ձգված մետաղական լարի փխրունությունը դիտարկելու համար՝ չափելով նրա սեփական տատանման հաճախությունը: Ծանր մասնիկների (պրոտոններ, նեյտրոններ, ալֆա մասնիկներ) հոսքերով նյութերի ճառագայթահարման գործընթացում նկատվում է նյութերի կառուցվածքի «վնասում»: Նման «վնասումներ»-ի կուտակման արդյունքում առաջանում է նյութերի հատկությունների մնացորդային փոփոխություն, մասնավորապես՝ փխրունություն և կարծրացում: Մետաղների մեխանի-

կական հատկությունների վրա ծանր ճառագայթման մասնիկների ազդեցությունը վերահսկելու համար, առաջարկվում է օգտագործել տատանվող լարի ռեզոնատորներ: Փորձերը ցույց են տալիս, որ մետաղալարի նյութի կառուցվածքի փոփոխությունը նրա տաքացում-հովացման գործընթացում ազդում է սեփական տատանումների հաճախության արժեքի վրա: Արդյունքները ցույց են տալիս, որ մինչև որոշակի ջերմաստիճաններ նյութի կարծրացում նկատվում է մետաղալարերի հաճախության բարձրացմամբ: Նախատեսվում է շարունակել փորձարկումները 18 ՄԷՎ էներգիայով պրոտոններով ճառագայթված լարերի վրա: Սա լավ հնարավորություն է միջուկային ռեակտորի նյութերի նեյտրոնային ճառագայթման գործընթացը մոդելավորելու համար: Ստացված արդյունքները հատկապես կարևոր կլինեն միջուկային էներգետիկայի համար, որտեղ արդիական է նեյտրոնների ազդեցության տակ ռեակտորային կորպուսների փխրունության խնդիրը:

5. Տատանվող երկլարանի մոնիտորների առանձնահատկությունների ուսումնասիրություն:

Հաշվետու ժամանակահատվածում կատարվել են փորձեր՝ տատանվող երկլարանի մոնիտորների առանձնահատկությունները ուսումնասիրելու և բացահայտելու նպատակով: Տատանվող լարի մոնիտորները օգտագործվում են տարբեր բնույթի փնջերի լայնակի պրոֆիլները չափելու համար: Սկանավորման ճշգրտությունը բարձրացնելու և որոշ դեպքերում սկանավորումը վերացնելու համար (պրոֆիլի չափումը լարերի մատրիցայի միջոցով) առաջարկվել է օգտագործել մի քանի տատանվող լարեր: Նման երկու իրարից հեռու գտնվող տատանվող լարերով մոնիտորը, կազմում է լաբորատոր ստենդի չափիչ մասը, մշակված Հայ-Գերմանական նախագծի շրջանակներում ուսանողներին արագացուցչի տեխնիկա ուսուցանելու համար: Քննարկվում են նման երկլարային մոնիտորի առանձնահատկությունները, մասնավորապես լարերի միջև լազերային ճառագայթման հզորության վերաբաշխման խնդիրները:

6. «Կամայական շարժվող լիցքավորված մասնիկի էլեկտրական դաշտի գծեր» թեմայի վերաբերյալ նոր առաջարկներ:

Շարունակվել է ուսումնասիրվել «Կամայական շարժվող լիցքավորված մասնիկի էլեկտրական դաշտի գծեր» թեման: Ռելատիվիստիկ լիցքավորված մասնիկների էլեկտրամագնիսական դաշտերը ունեն լայն հաճախությունների սպեկտր և բարդ տարածական կառուցվածք: Դաշտի գծերը այդ տարածական կառուցվածքի վիզուալ պատկերացում են տալիս: Մենք ստանում ենք հավասարումների ընդհանուր շարք ցանկացած շարժվող լիցքավորված մասնիկի դաշտի գծերի համար: Էլեկտրական դաշտի գծերը ամբողջությամբ որոշվում են միավոր վեկտորով արգելակման կետից մինչև դիտակետ: Համապատասխան փոխակերպումներից հետո դաշտի գծերի հավասարումները նկարագրում են այդ վեկտորի պտույտը՝ անկյունային արագությամբ, որը համընկնում է թոմասի պրեցեսիայի հետ: Որոշ դեպքերում, ներառյալ բոլոր հարթ հետագծերը, դաշտի գծերի հավասարումները վերածվում են հաստատուն գործակիցներով գծային դիֆերենցիալ հավասարումների: Ներկայացված են այս հավասարումների մանրամասն դուրսբերումը և դրանց ընդհանուր անալիտիկ լուծումները: Այնուհետև այս մեթոդը պատկերված է՝ կառուցելով դաշտի գծեր էլեկտրական լիցքի «ուլթրայակի» շարժման համար, որը շարժվում է հարթ ալիքի ազդեցության տակ, ներառյալ դաշտի կոմպլեքս գծերը եռաչափ հարթությունում:

7. Ռելատիվիստիկ լիցքավորված մասնիկի պարուրաձև հետազոծով շարժման ուսումնասիրություն:

Ուսումնասիրվել է ռելատիվիստիկ լիցքավորված մասնիկի պարուրաձև հետազոծով շարժումը: Շրջանաձև բևեռացված SՀg հաճախության ճառագայթում գեներացնող սարքերից մեկը օնոլոյատորն է, որում ռելատիվիստիկ լիցքավորված մասնիկը շարժվում է պարուրաձև հետազոծով: Նման մասնիկի կողմից ստեղծված էլեկտրամագնիսական դաշտի տարածական բաշխումը վերլուծվում է էլեկտրական դաշտի գծերի միջոցով: Ճշգրիտ լուծված են էլեկտրական դաշտի գծերի հավասարումները, որոնք հետազոծի կորության և ոլորման առկայության պատճառով չեն պարունակում նույն հարթության մեջ ընկած գծերի դաս: Տարածության մեջ գծերը ներկայացնելու համար մշակվել է հատուկ ալգորիթմ՝ գծերի անտեսանելի մասերը ջնջելու համար: Կիրառվել է դաշտի նկարների անիմացիա տարբեր դիտման անկյունների համար:

Պինդ մարմնի ճառագայթահարային ֆիզիկայի խմբի (240/3) 2023 թվականի գիտահետազոտական գործունեության հակիրճ նկարագրություն

Խմբում կատարվող աշխատանքները նվիրված են մի շարք նյութերում (կիսահաղորդչային սիլիցիում, կորունդ, արևային բջիջներ) բարձր էներգիայով օժտված տարբեր մասնիկներով (3,5 ՄԷՎ էներգիայով էլեկտրոն, 18 ՄԷՎ էներգիայով պրոտոն, նեյտրոն) ճառագայթահարմամբ առաջացած երևույթների ուսումնասիրությանը: Ուսումնասիրվել է նաև հայկական և սիրիական տարբեր բաղադրությամբ բնական ցեոլիթների դիէլեկտրիկ և էլեկտրահաղորդականության պարամետրերը: Հետազոտվել է բարձր ջերմաստիճանային գերհաղորդիչների գերհաղորդչային և նորմալ վիճակի բնութագրերը՝ կախված ջերմային թրծման ռեժիմից:

Ռազմավարական հիմնական ուղղությունները և ապագային միտված պլանները

1. Սահակյան Արամ և Մարտիրոսյան Արվիհես

Կատարում են հետազոտություններ երկու ուղղություններով.

ա) Հաջորդական ՄԷՎ էներգիայով պրոտոն-էլեկտրոնային ճառագայթահարման ազդեցությունը սիլիցիումի միսբյուրեղների բնութագրերի վրա:

Կիսահաղորդչային սիլիցիումը լայնորեն օգտագործվում է ժամանակակից էլեկտրոնային արդյունաբերության մեջ, որպես տարբեր սարքավորումների հիմնարար բաղադրիչ մաս: Բազմաթիվ էլեկտրոնային սարքավորումներ աշխատում են բարձր էներգիաներով օժտված մասնիկներով ճառագայթահարվող միջավայրում, ինչպիսիք են ատոմային ռեակտորները, տիեզերական կայանները և այլն: Նշված միջավայրերի կարևոր առանձնահատկություններից մեկն է հանդիսանում այն, որ էլեկտրոնային սարքավորումները միաժամանակ ենթարկվում են մի քանի տեսակի բարձր էներգիայով օժտված մասնիկների ճառագայթահարման ազդեցությանը: Օրինակ՝ երկրի արհեստական արբանյակները գտնվում են տարբեր տեսակի բազմաթիվ մասնիկների ճառագայթահարման տակ որոնցից առավել ինտենսիվ են մի քանի ՄԷՎ էներգիայով էլեկտրոնները և պրոտոնները: Սովորաբար լաբորատոր պայմաններում նյութերի վրա ճառագայթահարման ազդեցությունը ուսումնասիրելիս օգտագործում են միայն մի տեսակի մասնիկի ճառագայթահարումով հարուցված երևույթները, քանի որ միաժամանակ մի քանի տեսակի արագ մասնիկներով նմուշի ճառագայթահարումը տեխնիկապես անհնար է: Չնայած սիլիցիումում ճառագայթահարման երևույթների հետազոտություններին նվիրված բազմաթիվ

աշխատանքներին նույն նմուշը տարբեր տեսակի արագ մասնիկներով ճառագայթահարային արատների ուսումնասիրություններին վերաբերվող տվյալներ գրականությունից հայտնի չեն: Այդ պատճառով կիրառական և գիտական տեսանկյունից օգտակար տեղեկություններ կարելի է ստանալ, եթե սիլիցիումը ճառագայթահարվի մի տեսակի արագ մասնիկներով՝ այնպիսի չափաբաժնով, որի դեպքում նրա կիսահաղորդչային պարամետրերը դեռևս ամբողջությամբ չեն դեգրադացվում: Այնուհետև ճառագայթահարելով մի այլ տեսակի մասնիկներով, ուսումնասիրել նմուշի էլեկտրաֆիզիկական պարամետրերի (լիցքակիրների կոնցենտրացիա, շարժունակություն, տեսակարար դիմադրություն) վարքը կախված հարվածող մասնիկների տեսակից և ճառագայթահարման չափաբաժնից: Դա թույլ կտա համակարգված տեղեկություն ստանալ բարձր էներգիաներով օժտված տարբեր տեսակի մասնիկներով ճառագայթահարվող միջավայրում սիլիցիումում առաջացած ճառագայթահարային արատների տեսակի և պարամետրերի մասին: Նմուշի էլեկտրաֆիզիկական պարամետրերը չափվում են Հուլի էֆեկտով աշխատող սարքի միջոցով տարբեր ջերմաստիճաններում:

Ներկայացված ծրագրով ուսումնասիրվել է 18 ՄԷՎ էներգիայով պրոտոններով և պիկովայրկյանային 3.5 ՄԷՎ էներգիայով էլեկտրոններով հաջորդական ճառագայթահարմամբ հարուցված երևույթները և դրանց ազդեցությունը սիլիցիումի միաբյուրեղի էլեկտրաֆիզիկական պարամետրերի վարքի վրա: Սիլիցիումի հաջորդական ճառագայթահարմամբ երևույթների ուսումնասիրության արդյունքները տպագրված է ամսագրում և ներկայացված է միջազգային գիտաժողովում:

Այս բնույթի աշխատանքները մեծ ծավալի են և ներկայումս շարունակվում են:

բ) ՄԷՎ էներգիայով պրոտոնային և էլեկտրոնային ճառագայթահարմամբ հարուցված երևույթների փորձարարական ուսումնասիրությունը սիլիցիումային արևային բջիջներում տիեզերական ճառագայթահարման պայմաններում կիրառության համար:

Ներկայումս տիեզերքի և Լուսնի ուսումնասիրության աշխատանքները գտնվում են ակտիվ փուլում: Այդ աշխատանքները իրականացնելու համար անհրաժեշտ էներգիայի կարևոր աղբյուր է հանդիսանում կիսահաղորդչային սիլիցիումի հիմքով աշխատող արևային էներգիայի փոխակերպիչները: Տիեզերական տարածությունում աշխատող սարքերը գտնվում են անընդհատ տարբեր տեսակի և էներգիայի մասնիկներով ճառագայթահարման ներքո, որոնցից առավել ինտենսիվ են մի քանի ՄԷՎ էներգիայով էլեկտրոնները և պրոտոնները: Այդ տեսանկյունից արդիական են դառնում ոչ միայն գիտական այլ նաև կիրառական հետազոտությունները արևային էներգիայի փոխակերպման բջիջների աշխատանքի կայունության և երկարակեցության խնդիրների ուսումնասիրությանը:

Նախատեսվում է փորձնականորեն ուսումնասիրել 18 ՄԷՎ էներգիայով պրոտոնների և 3,5 ՄԷՎ էլեկտրոնների ճառագայթահարման ազդեցությունը բյուրեղային սիլիցիումի կիսահաղորդչային արևային բջիջներում տիեզերական ճառագայթահարվող միջավայրերում կիրառությունների համար:

18 ՄԷՎ էներգիայով պրոտոնային ճառագայթահարումը իրականացվելու է C-18 ցիկլատրոնում իսկ 3,5 ՄԷՎ էլեկտրոնային ճառագայթահարումը կատարվելու է CANDLE սինքրոտրոնային ճառագայթային ինստիտուտում: Նմուշները ճառագայթահարվելու են սենյակային ջերմաստիճաններում:

Ծրագիրն իրականացնելու համար նախատեսվում է լուծել հետևյալ խնդիրները.

1. Ուսումնասիրել սիլիցիումի հիմքով արևային փոխակերպիչների պարամետրերի վարքը պրոտոնային և էլեկտրոնային ճառագայթահարման ժամանակ, որոշել ճառագայթահարման դոզայից կախված արևային վահանակների դեգրադացիայի սահմանը:
2. Մշակել և պատրաստել փորձարարական սարքավորում սիլիցիումի հիմքով արևային փոխակերպիչների պարամետրերի չափան համար տարբեր ջերմային պայմաններում:

2. Նիկոդոսյան Սերգեյ

Հաշվետու տարում իրականացվել են աշխատանքներ «Թերմոդեֆեկտների ուսումնասիրությունը կիսահաղորդչային բյուրեղներում» թեմայի շրջանակներում: Si-ի և InAs-ի բյուրեղներում ջերմամշակումից կամ ճառագայթահարումից հետո էլեկտրաֆիզիկական բնութագրերի փոփոխությունները դրսևորվում են, մասնավորապես, ազատ հոսանքակիրների զգալի աճով, որը վերագրվում է նմուշում առկա էլեկտրականապես պասիվ մնացորդային խառնուրդային ատոմների (Cu, O և S) ակտիվացմանը: Սակայն եղած բոլոր փորձարարական արդյունքների միարժեք մեկնաբանությունը մինչ այժմ առաջարկված տեսական մոդելների շրջանակում հնարավոր չէ: Մեր կողմից հրապարակման է պատրաստվում մի աշխատանք, որտեղ ազատ էլեկտրոնների կոնցենտրացիայի դիտվող աճը InAs-ում բարձր ջերմաստիճանային մշակումից կամ արագ մասնիկներով ճառագայթահարումից հետո, առաջին անգամ տեսական հաշվարկների միջոցով փորձ է արվում կապել բյուրեղում անվերահսկելի խառնուրդային ոչ մեծ կոմպլեքսների (Cu^+O^- և Cu^+S) առկայության հետ: Վերոհիշյալ գործոնների ազդեցության տակ այդ կոմպլեքսների (թերմոդեֆեկտների) քայքայումն էլ հենց բերում է թերմոդոնորների առաջացման և դրանով պայմանավորված ազատ հոսանքակիրների աճին: Իրականացվել են թերմոդեֆեկտների հատկությունների նմանատիպ հետազոտություններ նաև Si-ի տարբեր տիպի և տարբեր հաղորդականությամբ օժտված միաբյուրեղներում: Թերմոդեֆեկտների կազմում եղած մնացորդային ատոմների նույնականացման նպատակով օգտագործվել է Ֆուրիե փոխակերպման ինֆրակարմիր սպեկտրաչափը (Agilent Cary 630 FTIR Spectrometer) սպեկտրի 400 սմ^{-1} - 4000 սմ^{-1} տիրույթում: Նախնական չափումները ցույց են տվել, որ այդ միաբյուրեղներում դիտվող հստակ արտահայտվող պիկերը սպեկտրի 400-470 սմ^{-1} միջակայքում ավելի վաղ դիտվել են նաև այլ հետազոտողների կողմից և դրանք կարելի է վերագրել արդեն նրանցում առկա թերմոդոնորներին: Որոշակի ծրագրով մշակելուց հետո և Հոլի երևույթի չափումների հետ համադրման միջոցով կարելի է որոշակի կապ գտնել նշված բյուրեղներում առկա հաճախակի հանդիպող O-ի և C-ի ատոմների կոնցենտրացիաների, ինչպես նաև նրանց էլեկտրատրանսպորտային բնութագրերի (տեսակարար դիմադրություն, հոսանքակիրների կոնցենտրացիա և շարժունակություն) միջև: Այդպիսի չափումների իրականացումը տարբեր ջերմային ռեժիմներով թրծելուց կամ տարբեր տիպի արագ մասնիկներով (պրոտոններ, էլեկտրոններ) ճառագայթահարումից հետո, կնպաստեն Si-ի բյուրեղներում թերմոդոնորների առաջացման համար պատասխանատու կենտրոնների բնույթի բացահայտմանը: Հետազոտությունների իրականացմանը մասնակցել են նաև ճարտարագետ Աղասի Հովհաննիսյանը և Արփինե Մարտիրոսյանը:

3. Հովհաննիսյան Աղասի, Մեհրաբյան Նարեկ

Հաշվետու ժամանակահատվածում կատարվել են փորձարարական սարքերի մշակման և պատրաստման աշխատանքներ: Մասնավորապես, իրականացվել են C-18 ցիկլատրոնում կիսաավտոմատ հեռակառավարվող սարքի նախագծման և պատրաստման աշխատանքներին: Սարքը նախատեսված է նմուշների ճառագայթահարման համար և ունի հետևյալ պարամետրերը. միանգամյա լիցքավորված նմուշների քանակը մինչև 17 հատ: Այդ սարքը թույլ է տալիս առանց արագացուցիչի աշխատանքը դադարեցնելու հաջորդաբար ճառագայթահարել բոլոր նմուշները համապատասխան դոզաներով: Նախքան սարքի օգտագործումը յուրաքանչյուր նմուշի ճառագայթահարումից հետո հարկ էր լինում սպասել 20-30 րոպե որպեսզի դահլիճում հաստատվի ճառագայթահարման թույլատրելի դոզա, այնուհետև տեղադրել հաջորդ նմուշը: Սարքի կիրառումը թույլ է տալիս էականորեն կրճատել ցիկլատրոնի աշխատա- ժամանակը և խիստ կրճատել անձնակազմի ճառագայթահարման ժամանակը:

Շարունակելու են նոր փորձարարական սարքերի պատրաստման և նախկին սարքերի անխափան աշխատանքների ապահովման աշխատանք- ները:

4. Հովհաննիսյան Արման

Հովհաննիսյան Արմանը ԵՊՀ-ի ռադիոֆիզիկայի ֆակուլտետի ուսանող է 2021 թվականից և վերականգնվել է ԱԱԳԼ-ում, որպես լաբորանտ` ՀՀ Չինված Ուժերից գորացրվելուց հետո (03.03.2023թ.):

Հաշվետու ժամանակահատվածի ընթացքում (03.03.2023-30.06.2023) նա ուսումնասիրել է գրականություն լայնագոտի լազերային բյուրեղների օպտիկա- կան հատկությունների, դրանց հետազոտման մեթոդների և կիրառական ոլորտ- ների մասին: Հայտնի է, որ միաբյուրեղ սապֆիրը ($\alpha\text{-Al}_2\text{O}_3$) լայն կիրառություն է գտել էլեկտրոնիկայի մեջ` շնորհիվ իր յուրահատուկ ֆիզիկական և քիմիական հատկությունների: Այս լայնագոտի դիելեկտրիկ ունի բարձր ճառագայթային, ջերմային (հալման ջերմաստիճան 2050°C) և քիմիական կայունություն, ինչը հնարավորություն է տալիս այն օգտագործել բարձր ջերմաստիճաններում և ուժեղ ճառագայթային դաշտերում: Սապֆիրե միաբյուրեղները օգտագործվում են որպես դիելեկտրական ենթաշերտեր ատոմակայաններում, տիեզերքում գործող սարքավորումներում, ինչպես նաև ջերմամիջուկային ռեակտորներում օգտագործվող օպտիկական պատուհանների համար:

Աշխատանքային պլան.

Ա. Հովհաննիսյանը ֆ.մ.գ.դ., պրոֆեսոր Վաչագան Հարությունյանի ղեկավարությամբ կատարելու է «Լայնագոտի լազերային միաբյուրեղների ճառագայթաօպտիկական հատկությունների ուսումնասիրումը: Բարձր էներգիական մասնիկներով (պրոտոններ, նեյտրոններ, էլեկտրոններ, իոններ) ճառագայթահարված սապֆիրի միաբյուրեղներում արատների առաջացման մեխանիզմները» թեմայով աշխատանքը:

Նախատեսվում է լուծել հետևյալ խնդիրները

1. Ուսումնասիրել ռադիացիոն աղբյուրների օգտագործմամբ կորունդի նմուշների ճառագայթման մեխանիզմները (Cyclotron C-18, ЭЛУ-75 MeV (ԱԱԳԼ), AREAL-3.5 MeV (CANDLE), IBR-2-JINR, Դուբնա):

2. Լյումինեսցենստային և օպտիկական սպեկտրոսկոպիայի մեթոդների կիրառմամբ ուսումնասիրել ճառագայթման արդյունքում նյութում առաջացած արատները և դրանց տեսակները:

3. Ուսումնասիրել տարբեր մեթոդներով աճեցված կորունդի ջերմայումինեսցենստային հատկությունները 94-8604 ջերմաստիճանում: Դա

հետաքրքիր է նաև ճառագայթային դոզիմետրիայում դրանց կիրառման հնարավորության տեսանկյունից:

5. Կոստանյան Գայանե

ԱԱԳԼ Ֆիզիկայի կիրառական հետազոտությունների բաժնի ARL Quant'X EDXRF Analyzer (ENERGY DISPERSIVE X-RAY FLUORESCENCE) սարքը նախատեսված է և կիրառվում է փորձարարական աշխատանքներում ռենտգեն ֆյուրեսցենտային անալիզի (XRF) մեթոդով կիրառվում է բաղադրիչ տարրերի որոշման համար՝ Մենդելևի պարբերական աղյուսակում նախատեսված միջև ուրան: Չափումները կատարվում են ինչպես ԱԱԳԼ բաժանմունքների, մասնավորապես՝ Ֆիզիկայի կիրառական հետազոտությունների բաժնի, Իզոտոպների հետազոտման և արտադրության բաժնի /Գրիգորյան Ա., Մանուկյան Ա./, Փորձարարական ֆիզիկայի բաժանմունքի /Քերոբյան Ի., Մկրտչյան Հ., Պողոսյան Լ., Ղազարյան Վ., Մարգարյան Ն./, ինչպես նաև ՀՀ այլ կազմակերպությունների՝ ՀՀ ՊՆ, ԵՊՀ Ֆիզիկայի ինստիտուտի Միջուկային ֆիզիկայի ամբիոնի / Բալաբեկյան Ա./, Մանվելյանի անվան ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտի, Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի գիտական, հետազոտական և փորձարարական աշխատանքների շրջանակներում: Նախատեսվում է շարունակել ռենտգեն ֆյուրեսցենտային անալիզի (XRF) մեթոդով կիրառվող տարրերի որոշման աշխատանքները շարունակել վերը նշված, ինչպես նաև համագործակցել նոր կազմակերպությունների հետ:

Օպտիկայի և սպեկտրասկոպիայի խումբը (240/5) աշխատանքներ է իրականացնում մի քանի հիմնական ուղղություններով.

1. Հիդրոթերմալ միկրոալիքային սինթեզի մեթոդով ստացված սիլիկատային միացությունների վրա հիմնված ջերմակարգավորիչ շերտերի ճառագայթահարման նկատմամբ կայունության ուսումնասիրում՝ օգտագործելով բարձր էներգիայի մասնիկներով ճառագայթում: Ճառագայթահարման ազդեցության հետևանքով կիրառվում առաջացած կառուցվածքային փոփոխությունների ուսումնասիրում կառուցվածքային, ձևաբանական և սպեկտրալ վերլուծության միջոցով: «Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր-2021» մրցույթի շրջանակներում սիլիկատային նմուշները ճառագայթահարվել են պրոտոնային փնջով տարբեր դոզաներով, հասկանալու համար թե դոզայից կախված ինչ փոփոխություններ են տեղի ունենում կիրառվում:
2. Կապար-հալոգենային պերովսկիտների հիմքով արևային բջիջների ստացում և հատկությունների ուսումնասիրումը Բարձրագույն Կրթության և Գիտության կոմիտեի աջակցությամբ իրականացվող թեմատիկ ֆինանսավորման շրջանակներում: Իրականացվել են անօրգանական CsPbI₂Br պերովսկիտների նստեցումը ապակի, ապակի/FTO, ապակի/FTO/TiO₂ համակարգերի վրա: Նստեցումը կատարվել է պտտական պատման (spin coating) եղանակով և արդյունքում ստացված նմուշները ուսումնասիրվել են օպտիկական, մորֆոլոգիական և կառուցվածքային ուսումնասիրման մեթոդներով:
3. Պրոտոնային ճառագայթման ազդեցությունը անօրգանական կապար-հալոգենային պերովսկիտների օպտիկական, մորֆոլոգիական և կառուցվածքային հատկությունների վրա՝ Բարձրագույն Կրթության և Գիտության կոմիտեի աջակցությամբ իրականացվող Գիտական Խմբերի Մեկնարկի աջակցության ծրագրի շրջանակներում: Իրականացվել է փոշենստեցման եղանակով ստացված անօրգանական CsPbBr₃ բարակ

Թաղանթների պրոտոնային ճառագայթահարում C18 ցիկլոտրոնային արագացուցչի 18 ՄԷՎ էներգիայով պրոտոնային փնջի կիրառմամբ: Վերոհիշյալ մեթոդների կիրառմամբ ուսումնասիրվել է ճառագայթահարման ազդեցությունը թաղանթների վրա:



Կոսմոլոգիայի և աստղաֆիզիկայի կենտրոն

Ղեկավար՝ Վ.Գ. Գուրզադյան

Հաշվետու ժամանակահատվածում **Կոսմոլոգիայի և աստղաֆիզիկայի կենտրոնը** ծավալել է գիտահետազոտական գործունեություն հետևյալ հիմնական ուղղություններով՝

- Դինամիկական համակարգեր, գեոդեզիական հոսքեր, գրավիտացիոն ալիքներ;
- Տիեզերքի մեծ տարածքային կառուցվածքը, կոսմոլոգիական անոմալիաներ /tensions/, մոդիֆիկացված գրավիտացիա;
- Գերնորեր, գալակտիկաների ձևաբանական և դինամիկական հատկություններ:
- Գալակտիկական մուգ հալոներ;
- Նեյտրոնային ցանցեր և մեքենայական ուսուցման ալգորիթմներ աստղաֆիզիկական տվյալների վերլուծությունում;

Արդյունքները հրատարակվել են բարձր ազդեցության գործակցով (IF) ամսագրերում:

Հիմնական արդյունքները.

1. Առաջարկված է լոկալ տիեզերքում նյութի բաշխման առաջացման մեխանիզմ: Ցույց է տրված նյութի քվադր-պարբերական բաշխման առաջացումը թույլ դաշտի մոտավորությամբ Ընդհանուր Հարաբերականության տեսության՝ կոսմոլոգիական հաստատունի առկայությամբ (Gurzadyan, Fimin, Chechetkin, *Astronomy & Astrophysics*, 2023a, 2023b);

2. Հրապարակվել են Հարաբերականության ընդհանուր տեսության մեծ ճշտությամբ ստուգման առաջին արդյունքները ստացված LARES-2 արբանյակի միջոցով՝ միջազգային համագործակցության ծրագրով: Արբանյակային ծրագիրը առաջարկվել էր 2017-ին, արբանյակը արձակվել էր 2022-ին Եվրոպական տիեզերական գործակալության Կուրու (European Space Agency spaceport, Kourou) կայանից (Cuifolini et al, 2023a, 2023b):

3. Հետազոտված է Ia Գերնորերի բաշխումը պարուրածև կողքից դիտված /edge-on/ գալակտիկաներում: Ցույց են տրված առանձին դասերի Գերնորերի ուղղահայաց բաշխումների տարբերությունները և արվել են եզրահանգումներ Գերնորերի բաշխման և գալակտիկաների դինամիկական հատկությունների և աստղային բնակչության տարիքների առնչությունների վերաբերյալ (Barkhudaryan 2023; Hakobyan, Karapetyan, Barkhudaryan, 2023)

